ԱՂԲԻՒՐ

ԾՆՈՂՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՏՈՐ ՈՒՍՄԱՆՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զկնորս՝ (բալլադա), Ջ. Բայրոնեան. Ընտանիքը՝ Ա-ղը-Դատպարէնի՝ Ամուսինների պատուհասութիւնները. թարգմ. Հ. Առաքելեան: Դէպք Ռուսպհանի՝ Երեխաների կեանքից. փոխադր. Մարուխ: Պ. Լիտվինովի՝ Սկզբնական կրթութեան հասակը ընտանիքում: Մանուկների յանձնութիւնը եւ նրանց առաջն առնելու միջոցները, թարգմ. Դաստիարակ:

ԹԻՓԼԻՍ

ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Գօրչվհանսկի եւ Բաբեսատհանսկի փողոցների սահիւանում.

1891

ԱՂՔԻՒՐԻ

ԾՆՈՂՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՏՈՐ ԱՌԱՔԵԼԻ

ԹԻՓԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐՆԱՆՑ
Գօլօվինսկի եւ Բաղեբաթինսկի փողոցների անկիւնում.
1891

Дозволено Цензурою, Тифлисъ 22 мая 1890 г.

Тип. „АРОРЪ“ Т. Я. Назарьянъ, уголъ Голов. пр. Бар. ул.

ՁԿՆՈՐՍ (բալլադ.ա)

Ջուրը փրփրում է, ջուրը աղմկում,
Ձկնորսը այնտեղ նըստած է ափում,
Նայում է հանդարտ իր կարթի թելին,
Անխըռով ու պաղ մինչ խորը սըրտին:
Եւ երբ նա բազմած ականջ էր ղընում,
Ցանկարծ ճեղքւում է, ջուրը պատառւում,
Ցատակից մի կին դուրս ցատկում թրջըված
Եւ ղիմում նորան ճայնով վըրդովված:

Եւ երգում է նա եւ ասում նրան.—
Ինչու՞ իմ տոհմը խորամանկութեամբ
Քարշում ես դու վեր, ով մարդ նենգութեամբ
Եւ խեղդող օդում ննջարկում մահւան:
Օ՜, թէ գիտնայիր, թէ ջրի միջում
Ձկնիկը իրան ինչ լաւ է զգում,
Դու ինքդ շուտով հէնց ցած կիջնէիր
Եւ, կապկած հոկայ, կառողջանայիր:

Ահա արեգը ու պայծառ լուսինն
Ինչու՞ են ծովում միայն գովանում,
Եւ նոցա ղէմքը կըրկին ու կըրկին
Ինչու՞ է ալեաց մէջ գեղեցկանում...
Մի թէ չի գրաւում երկինքը անտակ
Քեզ չինչ կապոյտը, այն պայծառ, իստակ,
Կամ մի՞թէ ղէմքը քո այդ սեպհական
Չէ քեզ հրապուրում ցօղումն մշտական:

Ծովը փրփրում է, ծովը աղմկում,
Ձկնորսը քոքիկ ոտները թրջում...
Իսկ նրա սիրտը աճում էր, լըցւում,
Կարծես, սիրելուց բարեւ էր անում...
Եւ երգից կինը եւ ասաց նրան...
Կրկորչէ ձկնորսն, թէ ուշքի չեկաւ...
Եւ քաշից կինը, ընկըղմից նրան...
Ձկնորսին յետոյ ոչոք չըտեսաւ...

Ջ. ԲԱԼՄՈՒՆԵԱՆ

ԸՆՏԱՆԻՔԸ

ԿՈՄՍ Ա ԴԸ ԳԱՍՊԱՐԻՆՆ

Ամուսինների պարտաւորութիւնները

Պօղոս առաքեալն բացատրելով Եփեսացիներին ամուսինների պարտաւորութիւնները, իր մտքը այս կերպով էր ամփոփում.

„Կանայք հնազանդ եղէք ձեր այրերին, ինչպէս Տիրոջը“։

„Այրեր սիրեցէք ձեր կանայքը ինչպէս Քրիստոս սիրեց եկեղեցին“։

Այս երկու սկզբունքի գործադրութիւնից բղխում է մխութիւնը այնպէս՝ ինչպէս Աստուած կամեցել է։

Հնազանդութիւն, սէր, մտերմութիւն, այս է ահա մեր առաքելական բնական բաժանումը։

Ընտանիքի համար մի պետ է հարկաւոր. այդ կէտի մասին ոչ մի տարակոյս չի կարող լինել. այլ ամուսնու հեղինակութիւնը պարզ կերպով հաստատուած է Ս. Գրքով. Նա չի թոյլատրում որ կինը ձգտի ձեռք բերելու մի դրութիւն, որ չի կարող նրան յարմարել, այլ նրան ցոյց է տալիս իր կախումն, երբ մի նդէալ, որին նա պէտք է ձգտի։ Այդպիսով չքանում են բոլոր վատ ցանկութիւնները, բոլոր անբնական վատասիրութիւնները, բոլոր այն վէճերը, որոնք ծագում են իշխանութեան անորոշողութիւնից։ Քրիստոնեայ կինը չի կարող մինչև անգամ երևակայել դերերի փոխանակութիւն. տղամարդի հպատակութիւնը նրան կենթարկէ տանջանքի և, համարձակում եմ ասել, անձնական նաստութեան։

Աւելի հեռուն գնանք. կնոջ սէրը պէտք ունի յարգանքի. որ պէտք է նա զգայ իր մօտ մի ամուր ձեռք։ Ղեկավարելու ընդունակ ձեռքը միայն կարող է և պաշտպանել։ Եւ եթէ դժբաղդութեամբ, այդ առնական զօրութիւնը պակասում է, երբ այս-ամուսինը առանց կամքի և վճռողականութեան է, ամեն բան երերում է նրա շուրջը. ամեն բան ծռում է և խրթնաքանչիւրը զգում է որ բանը կարգին չէ. միայն ճշմարիտ դրութիւնները բարերար ներգործութիւն ունին։ Ունենալ մի չենարան, կառավարիչ այդ լաւ է։ Որքան լեղչ կանայք տուժել են չը գանելով երանց ամուսնու մէջ մի գլխաւոր։ Եթէ նա ընդունակ լինէր նրա քմահճին հաճոյքներին, ուղղած լինէր նրա սրտի գաղափարները, պահանջած լինէր զոհել վատ և վատնգաւոր սովորութիւնները, նա նրան աւելի լաւ կը սիրէր և կը յարգէր։ Որքան երեխաները տուժել են իրանց հօր մէջ գլխաւոր չունենալով։ Նրա կակղութիւնը, թուլութիւնը կորցրել է նրանց. խստութիւնը, հաս-

տատակամուԹիւնը ազատած կը լլնէր նրանց նրանց ասպագայ չարիքից, և ոչ ԹՂ կը հեռացնէր նրանց Ճանապարհից մի քանի խոչընդոտները, այլ և կը խոտորացրէր նրանց հոգիները խորքում հնազանդուԹեան սկզբունքը, հասկացնել կը տար նրանց պատասխանատուԹիւնը։

Բայց Թողնենք մի կողմ եղեխաներին, մեզ բաւական է առայժմ քննել ամուսիններին։ Այստեղ մի նրանց հեղինակուԹեան կարևորուԹիւնը զգացում է առաջին օրից. այդ հեղինակուԹիւնը քնքշուԹեան, երջանկուԹեան, յաւաջադիմուԹեան հիմնական պայմաններից մէնն է կազմում։ ԱմուսնուԹեան մէջ նախապատուԹիւն կայ, բայց դա է մի նախապատուԹիւն հաւասարների մէջ. մարդ տեսնում է իր կնոջ մէջ «մի օգնական նման իրան»։ Այդպիսով պատասխանատուԹեան ներդաշնակուԹիւնը պահպանում է. հեղինակուԹիւնը խառնուում է գորովանքի հետ, հնազանդուԹիւնը միանում է արժանաւորուԹեան հետ։

Այդպիսի հնազանդուԹիւնը իր մեծուԹիւնն ունի։ Այն կինը որ այդ հնազանդուԹիւնը իրրև լուծ կընկատի, նա վտանգի տակ կդնի միանգամայն և իր սեպհական և բոլոր նրայինների երջանկուԹիւնը։ Որքան ազնիւ է, ընդհակառակն, այն հնազանդող կինոջ դրուԹիւնը, որ սիրում է իր դերը, ուրախ է հնազանդելու և հնազանդելու սիրով։ Մի անձն, որի անունը տալ չեմ ուզում, ասել է. «Սէրը նաւաձում է մեր բարոյական ազատուԹիւնը առանց եղծելու նրան»։

Ընտանիքը երբէք իր ծոցում տրուկները չէ պարունակում։ Ով որ ձգտում է կանանց հնազանդուԹիւնը սարկուԹեան կերպարանափոխել, նա անշուշտ մոռացել է իր մօրը։ Ես աշխարհի վրայ շատ քիչ բան այնքան գեղեցիկ և քաղցր եմ նմանում քան այս տանային կառավարուԹիւնը. երբ նա այնպէս է, ինչպէս որ պիտի լինի, այսինքն, տղամարդին է պատկանում գերագոյն վՀՌուը, բայց ոչ մի բան չէ վՀՌուում առանց կանխաւէս երկու ամուսինների մէջ քնքշարար և լրջարար քննած լինելու։

Այդպէս են Աստուածայնի հաստատուԹեան հրաշալիքը. հնազանդուԹիւնը և ազատուԹիւնը հաշտեցրել է։ Տկարացրէք ԹՂ մինն և ԹՂ մեսի ոյժը և դուք կընկնէք մի Թշուառ դրուԹեան մէջ։ Այլ ևս չկայ ոչ միուԹիւն, ոչ յարգանք, էլ չեմ ասում՝ ոչ սէր։ Եթէ կամ կինը ամբարտաւանայ և մեծ դժբախտուԹիւն իր, կամ տղամարդը, նոյնպէս և մեծ դժբախտուԹիւն իր, երկանացնէ իր բռնապետական մտածմունքները, երկուսն էլ ընկած են, ամուսնուԹիւնը դարձել է բոլորովին մի տարբեր ընկերակցուԹիւն, որովհետև ամուսնուԹիւնը վտանգում է իր էուԹեան մէջ, երբ որ կայնում ես նրա բաղկացնող տարերքին. Նա չէ կարող գոյուԹիւն ունենալ առանց հեղինակուԹեան և առանց հաւասարուԹեան։

Թող իմ կարծիքս վատ կերպով չը մեկնաբանեն. ընդունում եմ որ երկու սկզբունքները կարող են պահպանել աղնուԹեամբ, բայց համաբաձակ, օր-ցերեկով։ Գետնատիպ ճանապարհներով հաստատուած հաւատարմուԹիւնը, ներքևից կատարուող ազդեցուԹիւնը, կնոջ ուժով կատարած գործը—այդ ոչ ապիժանաւոր է և ոչ բարկ։ Այդ տեսակ խորհուրդները շատ անգամ տուել են կանանց, շատ անգամ նրանց ցոյց են տուել որ այն դրուԹիւնները, որոնք չի կարելի տանել, ճակատը բաց համաբաձակ, կարող են կատարուել առանց աղմուկի, նրանց յանձնարարել են քիչ պատասխանատուութիւն և առհասարակ այնպիսի վարմունք, որ աւելի ճարպիկ գործողուԹեան բնաւորուԹիւն ունի։

Այդ մի վատընԹաց բարոյականուԹիւն է, որի դէմ լինչքան բողոքես, էլի քիչ է։ Ամենից առաջ ճշմարիտ լինենք։ Ինձ հասկանալի է մի քանի ԹուլուԹիւնները. հասկանալի է, որ այդ տեսակ դժուարուԹիւններով ըմբռնուած հոգիները, դժուարուԹիւնները, որ վատասիրուԹիւնը քաշ է տալիս նը եաւելից, կարող են ի վերջոյ սայԹաքել. հասկանում եմ՝ երբ տիկին դը Մէնտնօն առաջարկում է կանանց այնպիսի գործողուԹիւնները, որոնց ինքն էս շատ կարօտ է եղել և սովորեցնում է նրանց ԹէՀ երանց եկեղեցական վիճակի մէջ «քաղցրուԹիւնը ամենալաւ միջոցն է երաւունք ունենալու»։

Բայց մեր օրինակը ուրիշ տեղ է և մենք ներկայումները պիտի ստանանք աւելի բարձր աղբիւրներից, Մենք խօսում ենք այստեղ պարտաւորուԹիւնների մասին։ Արդ, պարտաւորուԹիւնը չի խոտորուում նը ուղղուԹիւնից, չի ծուռում երան ընդունել տալու համար։ Կնոջ պարտաւորուԹիւնն է ճանաչել ըստ ամենայնի, պարզաբար, ուրախուԹեամբ ամուսնու հեղինակուԹիւնը, ամուսնու պարտաւորուԹիւնն է ճանաչել ըստ ամենայնի, պարզաբար, ուրախուԹեամբ կնոջ հաւատարմուԹիւնը։ Այդպէս կրհաստատուի հաւասարուԹեան մէջ այն կախումն, որի մասին հեԹանոսական աշխարհն ամենափոքր գաղափար անգամ չի ունեցել, և որն կազմում է Աւետարանի համեմատ ամուսնուԹեան առաջին հիմնաքարը։

Նկատեցէք մեր այժմեան երիտասարդ ամուսիններին. նրանց յարգելի գրուԹիւնը ստեղծուել է առանց ջանքի և առանց շփոԹուԹեան։ հէնց առաջին օրերից, նրանցից երբաքանչիւրը նը տեղն է գտացել երան, այն հիման վրայ, ուր նա բռնում էր այն տեղը, որ նշանակուած է երան Աւետարանով։ Նրանց մօտ ամուսնու հեղինակուԹիւնը, երևան է, անվիճելի. բայց ոչ այն հեղինակուԹիւնը, որ ծաղրելի պահանջները ունի և լինում է լոկ ձևի համար, այլ այն հեղինակուԹիւնը, որ խորին և քաղցր միաբանուԹեան արդիւնք է։ Երկուսն էս մի և նոյն հոգին, մի և նոյն մտածմունքն ունին, լինչպէս ունին մի և նոյն հաւատը։ Ո՞ւմից են ըստ խում երբաչէս վէճերը։ Չեմ կա-

ըոզ հաստատել, որ գերակշիռ ազդեցութիւնը միշտ ընտանիքի գըլխաւորինը եղած լինի։ Երբեմն, գուցէ շատ անգամ, կինը յզացած կըլինի առաջինն գաղափարը, նրա աւելի կենդանի բնազդումը աւելի արագութեամբ ըմբռնած կըլինի որոշ պարագաներըը, որոշ պարտաւորութիւններըը, նրա զգացմունքը նախամեծար եղած կըլինի։ Աւելի լաւ, եթէ այդ զգացմունքը արժանի է նախամեծար լինելու։ Ստուած ամուսնութեան այնքան նեղ միութիւնը չի ստեղծել, որպէսզի իւրաքանչիւրը ամփոփուի իր մէջ, մինը կառավարելով, միւսը լորտանկելով։ Երբ ամուսինն այնքան լիմար է, որ կամենում է կառավարել բարձրից և առանց խորհրդակցելու իր կնոջ հետ, նա ոչ թէ զրկում է շատ յոյսերից և շատ երջանկութիւններից, այլ և դառնում է մի շատ սաստիկ կատարող այն կամքի, որն նա կամենում է ցոյց տալ մեծ աղաղակով։ Այն տեղը, որտեղ առնական (տղամարդի) հեղինակութիւնը շատ յայտնի է դրսած, գրեթէ միշտ այնպիսի տեղ է, ուր կանայք, ցոյց տալով հանդերձ որ երկարկուում են այդ հեղինակութեան և խօսելով իրանց կրաւորական հնազանդութեան մասին, թագաւորում են իրրև բացարձակ դէսպոյ։

Եւ դրանից աւելի զզուելի տեսարան չեմ լսանում։

Ահա ձեզ երկու բնաւորութիւններ, որոնք ստանում են, կարծես դիտմամբ, մինը՝ իր տկարամտութեամբ պատած մեծամտութեան մէջ, միւսը՝ իր կեղծաւորութեան և անկաշխատանք ճարպկութեան մէջ։ Ո՛հ, Ճշմարիտ ընտանիքի մէջ իրերը ուրիշ կերպ են անցնում։ Այդտեղ ամեն բան վստահութիւն է և շիտակութիւն։ Ամուսինը հարկաւորութիւն չունի այդտեղ պաշտպանելու իր հեղինակութիւնը, որն իր կնոջ աւելի սիրելի է, քան նրան. կինը հարկաւորութիւն չունի ծածկարար ձեռք բերելու մի ազդեցութիւն, որի օրինաւորութիւնը ճանաչում է իր ամուսինը։ Ի հարկէ, այդտեղ վերջինն խօսքը, տարաձայնութեան ժամանակ, պատկանում է նրան, որի վրայ է ծանրանում պատասխանատուութիւնը. բայց տարաձայնութիւնները հազուագիւտ են այնպիսի անձերի մէջ, որ միմեանց սիրում են, որ միմեանց հետ խօսում են բաց սրտով, որ աշխատում են մերձ համաձայն ընթանալու և աղօթում են։ Որքա՜ն գեղեցկութիւն, նրանց խորհրդակցութեան մէջ։ Որքա՜ն բան ունին միմեանց ասելու։ Որքա՜ն ծանրակշիռ հարցեր կան քննելու։ Իւրաքանչիւրը օր նոր հարցեր է արծարծում, և իւրաքանչիւրը օր ևս խորհուրդ է կազմում. վիճաբանում են, քննում են թեր և դէմ, գուցէ մի քիչ տաքանում են, բայց ի վերջոյ միմեանց հասկանում են։ Եւ ահա այդտեղ տոլորում են միմեանց աւելի լաւ ճանաչել և սիրել, ահա այդտեղ խոր միութիւնը առաջադիմութիւն է գործում։

Մակերևոյթական միութիւնը

բաւական չէ։ Բաժանելով խորհըրդակցութիւնը երկու տեղ, բաժանում են համարեա այն բոլորն ինչ որ ամուսնութեան սուրբ և հզօր միաբանութիւնն է կազմում։ Ազատում են միմեանց մօտ, առանց միմեանց հանդիսելու, սովորում են խոյս տալ լուրջ առարկաներից. ամեն մարդ իր համար է պահում իր յուզմունքները և ապագայի ծրագիրները. ընտանեկան կեանքը նաստանում է։

Ես միշտ զարմանում եմ տեսնելով թէ մինչ որ այսինհան, շատ առարկաների վերաբերմամբ մենք կլասիկ ենք մնացել, ցոյների և հռոմայեցիների արժանաւոր հետևողներ։ Հին Գինէսէն (յոյների կանանց առանձին բնակարանը) դեռ մեզ համար մի տեսակ օրինակ է, որին մենք կամաւորապէս ուղղում ենք մեր նայուածքը։

Գաւ լինի եթէ ես ուրանալս լինեմ թէ կնոջ դերի մէջ ընաբերեալ բան չկայ։ Մինչդեռ մենք կոչուած ենք արտաքին կեանքին, կինը կոչուած է օջախի մօտ ապրելու. քաղաքական գործունէութիւնը, գործերի դեկավարութիւնը, դրսի աշխատութիւնը ընտանիքի պահպանութեան համար, այդ միայն մեզ է վերաբերում։ Կնոջ կոչումը բոլորովին այլ է. վոլտէնք հաշուի առնել։

Մեզ տալիս են երբեմն մի աքսիոմայ թէ այդ խոնարհ, ենթակայ բուն ներքին և տնայնի կոչումը (կնոջ), դրսի հետ ոչ մի շփումն չըպէտք է ունենայ։ Ահա այդ տեսակ անմտածած կերպով բերանից դուրս եկած եզրակացութիւններով մենք կեղծում ենք ամենասլաբզ կրերը։ Այդ տեսակ դրւած կանոնը շատ կարևոր բացառութիւնների պատճառ է դառնում։ Իսկ եթէ լինէ հարցնեն, ես գիտեմ մի ուրիշ կանոն, որ բնաւ ոչ մի բացառութիւն թոյլ չի տալիս.—սէկաք է որ կինը կանացի կերպով գործէ լինչ որ գործում է, կանացի կերպով, այսինքն խոնարհութեամբ, առանց աղմուկի, առանց օտարի ուշադրութիւնը գրաւելու։

Թէ կինը կարող է գիտնական լինել, դրա դէմ առարկելու ոչինչ չունիմ, բայց գիտնական կինը մի անհաճոյ էակ է, ծաղրելի, որին ենթարկւում ենք Մօլիէրի կատակաբանութեան։

Թէ կինը կարող է ունենալ քաղաքական համոզմունք, թէ նա կարող է երբեմն հայրենասէր հետաքրքրւել իր երկրի ճակատագրով, թէ ամբողջ աշխարհի մէջ յուզող խնդիրները կարող են նրան էս յուզել երանց մեծ կոզմերով, ես խոնարհում եմ համակրութեամբ և յարգանքով, բայց քաղաքական կինը ինձ ոչ յարգանք, ոչ համակրութիւն է ազդում և կարծեմ շատերը իմ կարծիքին կըլինեն։

Ո՞վ կարող է բարկանալ, երբ մի կին ունենում է շատ խորին և որոշակի շեշտած կրօնական համոզմունքներ, կամ նոյնպէս փիլիսոփայական հաւատալիք, և կամ թէ երբ նա էս սկսում է քննել հիմնական խնդիրները և ստեղծածները (պրօբլէմաց)։ Բայց դրբ-

տէօր-Կիւնը մի տեսակ հրէշ է երկու սեռին ևս պատկանող և չունենալով ոչինչ նրանից, որ երկուսի ձգմարիտ արժանաւորութիւնն է կազմում։

Երբ Կիւնը գրականութեան և արուեստների մասին ճաշակ է ցոյց տալիս, երբ նա խօսում է նրանց մասին յարիշտակութեամբ, չնորհքով, համեստութեամբ, նա իւր դէրից դուրս չի գալիս. բայց սրախօս Կիւնը մեզ վրդովում և վշտացնում է. նա դադարել է Կիւն լինելուց և երբէք մենք չենք ասի, որ նա լմացակատն է։

Այս րոպէիս Մօլլիէրի անունը տալի, բայց նմ պատկանած դատը նրանը չէ։ Ճշմարիտ է, ես ևս նրա պէս ատում եմ գիտնական Կիւնդ, բայց ես շատ հեռու եմ ծաղրահարելու այն դասական տէօրիային, այն լատինական տեսութեան, որն յետոյ երգերի, ծաղրաբանութիւնների միջոցով անցել է մեզ և որն անխնայ ծաղրում է Կիւնդ գիտութիւնը։

Պէտք է բողոքել այդ խօղը սրախալի և այդ անարդարութեան դէմ։ Որքան որ մենք պատրաստ ենք հսկել, որ Կիւնդ համեստ և առանձնակեաց դերը չպղտորելի, այն դերը, որ Ս. Գիրքը հաստատում է, երբ արգելում է Կիւնդ խօսել դաւանական ժողովների մէջ, նոյնքան և պարտաւոր ենք չմոռանալ, որ մեր կանայքը՝ մեր ընկերներն են, մեր հաւասարները, օժտած նոյն չափ մեծ, եթէ ոչ հաւասար կարողութիւններով, որոնց վրայ ծանրանում է մեր երեխաների դաստիարակութիւնը, որոնք կոչած են ընկերանալ մեզ հետ գաղափարների, ինչպէս և զգացումների և չահերի չափով։

Տգիտութիւնը մարդի առաքինութիւն չի տալիս. չատ անգամ նա ստեղծում է սահմանափակ, չոր և հպարտ բնութիւններ։ Ես գիտեմ անուսում կանայք, որոնք տան տնտեսութիւնը ևս կատարել չգիտեն, և կրթուած կանայք, որոնք չատ լաւ գիտեն տան տնտեսութիւնը։ Ուրեմն չատ սխալ է այն մարդկանց տեսութիւնը, որոնք, ասում են թէ Կիւնդ պէտք չէ ուսում, թէ ուսում առած կանայք չեն պարապում տան և խոհանոցի տնտեսութեամբ։ Նշանաւոր կանանց խոհանոցը վատ չի լինում բնաւ և նրանց տները վատ պահածներից չի լինում։ Մի՛թէ աւելի կատարեալ բան կայ, քան այն Կիւնը, որը չատ գիտէ, բայց գգալ չի տալիս, որ ունի համոզմունքներ. բայց չի վարդապետում, որ ամեն ընթերցանութեան, ամեն խօսակցութեան հետ ծանօթ է, կարող էլ պահանջել հարկին վարել, բայց իր գերազանցութիւնը ի ցոյց չի հանում, որ բերում է իր ամուսնուն, երեխաներին, իր բարեկամներին նրէհանների մի հարուստ հարկ, բայց մնում է պարզ, բնական, բոլորովին ազատ սեթևեթութիւնից։ Դուք տեսնում էք նրան չարատեւելիս իր պարտաւորութեանց մէջ, կատարելիս իր տունը, էապէս Կիւն, տնտեսութեան Կիւն, մինչև անգամ օգնական (հնոցի(առաջ չոքած կճուճը դնելիս, բայց

մի և նոյն ժամանակ հաճելի, վայելուչ կլինի, մխիթը մշակուած և կրթուած, և այդ վերջինն հանգամանքը, ի հարկէ, չի կարող ոչ մի բան խանգարել։

Փակել կանանց, այդ հեշտ գործ է. անդամահատել, տաղել, խլել կրթութեան միջոցները, խափանել զարգացումը, այդ դժուար չէ։ Բայց դժուարինը և գեղեցիկը, այդ կրթութիւնը պահպանողութեան և ամեն տեսակ զարգացումը կանացի համեստութեան հետ հաշտեցնելն է։

Դուք լսում էք կանանցից մտաւորական գործունէութիւնը. գիտէք ինչ էք անում։ Դուք մտում էք նրանց դէպի թեթևաբարբոքութիւնը, դէպի ամենադատարկ աշխարհասիրութիւնը, դէպի ամենայնմամբ, վտանգաւոր սեթևեթութիւնը։ Այդ է, լաւ լսացէք, պարզ հեռանքը այն տեսութեան, որ ժխտում է կանանց համար կրթութիւնը. այդ տեսութիւնը կանանց տնտեսուհի չի շինում, այլ այնպիսի թեթևսօրիկ էակներ, որոնց համար մի կերպաս ընտրելը, հակառակորդուհուն ջնջելը, պարահանդիսի մէջ վայելելը մի մեծ գործ է դառնում։ Եւ ճշմարիտ, մինչև կարելի է լցած համարել այն կէանքը, որ բաղկանում է ստացած և յետ տուած այցելութիւններից, ընկերական զանազանութիւններից, որոնք բացի ձանձրոյթից ուրիշ բան չեն արտադրում։ Մինչև երբ նրանց ընտանիքին կարող են օգտակար լինել այն կանայք, որ երբեք տղաներին դնում են պանսիոններում, աղջկերանց համար վարձում են դաստիարակչուհիները, որովհետև աշխարհայինն պարտաւորութիւններից այլ չեն բացանում, որ միջոց ունենան ուրիշ պարտաւորութիւնները կատարելու, որովհետև երանց արդուզարդից, քաղցը տոմսակներից և սրահները յաճախելուց յետոյ ոչ ժամանակ և ոչ ոյժ է մնում երանց ամուսնու, երանց զաւակների համար, աղքատները և որ և է լուրջ բանի համար։

Բայց զարմանալի բան։ Մի և նոյն մարդիկ, որ դատապարտում են կնոջ կրթութիւնը որպէսզի նրանք տունը պահեն, հսկեն տնտեսութեան վրայ և աղմուկ չբարձրացնեն, սակայն շատ բնական են գտնում, որ նոյա տալով տնտեսապարտութիւնից, որքան կարելի է աղմուկ հանեն, միայն թէ սովորական, ընկերակցութեան մէջ ընդունուած արտաքին պատշաճական ձևերի դէմ չմեղանչեն։ Ի հարկէ, վատ բան չէ գեղեցկուհի լինելը, բայց գեղեցկութիւնը չինել կեանքի միակ նպատակ, այդ շատ տխուր է։ Կայ մի տեսակ սուրբ վայելչակազմութիւն, որ չարգանք է ներշնչում, բայց թէ վայելչակազմ արարածները լինչ տեսակ կեանք են վարում, ոչ ոք այդ մասին չի մտածում։ Ես չեմ տեսնում, որ գայթակղութիւնները այդ տեսակ կեանքի դէմ, միայն արտայայտում են այն ժամանակ, երբ պէտք է դերձակուհու կամ մագազինի հաշիւն վճարել։ Արիստոկրատական ընտանում, այդ տեսակ կեանք վարելը,

այն է ժամանակին, կարողութեան, ընտանեկան երջանկութեան վատնումը, պատասխանատուութիւնների մոռացումը, բարոյական գոյութեան հրաժարումը—այդ ամենը ընդունած է։

Եւ դեռ կրկնում են մեզ հնացած երգիծաբանութիւնները կանանց կրթութեան դէմ և դեռ ասում են մեզ թէ՝ կինը պիտի խուսափէ այն ամենից, ինչ որ կարող է լրել նրան իր դերի նախանձախնդիր մթութիւնից, ինչ որ կարող է ստիպել նրան լքանել օջախը, ինչ որ կարող է գրաւել նրա վրայ օտարների նայուածքը։

Ոչ ոք ինձանից աւելի համոզուած է այդ բանի մէջ, ուստի և ես բոլորովին չեմ համաձրում, և ոչ մի ներողամտութիւն չունիմ այն գործողութիւնների մասին, որով կանայք վտանգի են ենթարկում իրանց ամենաթանկագին գարդը, այն է երեսի արուեստը։ Անհերելի է երբ նրանք հարուած են տալիս իրանց գեղեցկութեան, շնորհքին, իրանց կանացի բնաւորութեան։

Թող նրանք՝ կանայք մնան, և դաջհեալ կարող են դրսում դեր խաղալ։ Ատուած, որ կանչել է նրանց իրանց արևնը Թափելու Աւետարանի համար, յանձնել է նրանց այդ ժամանակ իր Ճշմարտութեան քաջ արի վկաների արտաքին դերը. քաջ և համեստ, նրանք ընկնում էին ամփիթատրոնի վրայ. սրբուհի Բլանդինը չէր դադարել խոնարհ կին լինելուց, երբ նրան մատնեցին դիւրատիչ գազանների ատամների մէջ աւելի կատաղի խուժանի աչքի առաջ։

Կին է մնում նա, որ դեկավարում է մի դպրոց, այցելում է հիւանդներին, գնում է մխիթարելու մեռնողներին։ Նա աղմուկ չի հանում, դուրջ նա խուսափում է մասնաժողովներից և բարեգործական ընկերութիւններից, բայց նա մի արտաքին գործ ունի կատարելու, և նա կատարում է։ Մթթէ կարծում էք, որ նա աւելի պակաս նամուսով, աւելի պակաս կին կլինի. որովհետև նրա քաղցը ձայնը մի քանի եղջ խոչընդոտում, կամ մի քանի հիւանդների անկողիններն մօտ լսելի է եղել։

Իսկ տաղանդը, իսկ երևակայութիւնը, իսկ բանաստեղծութիւնը, մթթէ պէտք հալածել նրանց։ Ատուած մի կնոջ պարգևել է վայրկեան ձիրքեր, մթթէ պէտք է խեղդել այդ ձիրքերը։ Ու՞ր իրաւունք ունինք այդպէս անելու։ Ո՞վ, հազար անգամ աւելի լաւ է խեղդել, քան թէ համեստութիւնը, քաղցը և խաղաղ միտքը, սուրբ նամուսը վտանգի տակ դնել։ Աւելի լաւ է մի գրող պակաս լինի, քան մի կին-հեղինակ աւելի։ Ամենից առաջ պահպանենք օջախը, ուսեանք Ճշմարիտ ամուսիններ, Ճշմարիտ մայրեր, Ճշմարիտ ընտանիքներ։

Բայց մթթէ իրօք անկարելի է կին մնալ. բուն կին և արտայայտել իր կարծիքը։ Երբ հաւատը, սէրը և տաղանդը հանդիպում են մէմեանց, մթթէ չեն կարող հանդիպել և խոնարհութեան հետ։ Այն բաները, որ միայն կանայք

դիտեն ասել, և կան այդպիսի բաները, մըրթիչ ուրիշ ոչ ոք մեզ չի ասիր

Ես ինձ զրկում եմ այս հարցերը քննելու հաճուրթիւնից. բաւական է որ այդ հարցերը դրի։ Ինձ համար, միտքը, իրրթուրթիւնը, տաղանդը, երևակայուրթիւնը ոչ թըղնամի են և ոչ էս կասկածելի, մինչև անգամ կանանց վերաբերմամբ։ Ես յարգում եմ, աւելի լաւ կարող եմ ասել,—խոնարհ կինը, տգէտ կինը, որն իր գլուղում կատարում է իր բոլոր՝ ամուսնու, մօր, գերած դրացուհու, հաւատարիմ քրիստոնեայի պարտաւորուրթիւնները. ես յարգում եմ նոյնպէս այն խոնարհ կինը, որն դրած լինելով տարբեր պայմանների մէջ, օժտուած լինելով ուրիշ ընդունակուրթիւններով, թևիչք է տալիս իր սրտի զգացմունքներին, իր հաւատի համոզմունքներին, իր բանաստեղծական երևակայուրթեան ստեղծագործուրթեան երևակայուրթեան, վախչելով աղմուկից, խուսափելով որքան կարելի է իր անունը առաջին տեղում դնելուց, լինելով պարզ, զուրկ որևէ պահանջմունքից, հեռու կարծելուց որ ինքն մի մշակուած մտաք է։ Երբ տեսնում եմ այս տեսակ մի կին, յարատև իր ջանքերի մէջ, առանձնասէր, հաճելի, տարածող իր տան մէջ մաքուր և բարի ուրախուրթիւններ, զբաղուած՝ սիրելու Թշուառներին, ժրաջան, քաղցրաբարոյ, երջանիկ՝ իր սրտի մէջ ունեցածը արտայայտելու համար, ես առաւել երջանիկ, որ կարողանում է իր շուրջը բարուրթիւն տարածել.—ահա, այդ ժամանակ ես զգում եմ, որ Ճշմարիտ ընտանիքը այդտեղ գոյուրթիւն ունի։

Հալածենք միայն չարիքը. Աստուծու տուրքերից չըփախչենք։ Եւ յետոյ չըմոռանանք երբէք, որ պարտաւորուրթիւնը գալիս է ամենից առաջ տաղանդից, լոյսից, նոյն իսկ տգիտուրթիւնից առաջ։

Աւետարանը մեզ ուղիղ Ճանապարհի վրայ է դնում, որովհետև մեզ միշտ պարտաւորուրթեան դէմ յանդիման է կանգնեցնում։ Ինչպէս չըհեռանալ տեսնելով այն տկուսնուրթիւնը, որով այդտեղ բացատրում են կանանց վիճակի երկու հիմունքը.—նրանց հնազանդուրթիւնը, նրանց հաւատարմուրթիւնը։ Այդտեղ մենք այլ ևս չենք գտնում Արիստոփանի Եւրիպիդի հին ծաղրերը կանանց մասին, որոնք միշտ կրկնում էին յոյների. այդտեղ մենք չենք տեսնում աշխարհասէր կանանց պաշտումն, այդ վերջին նախատինքը, այդ գերագոյն նպատացումն, որից յետոյ ոչինչ չէ մընում ոչնչուրթեան և սնապարծուրթեան դատապարտուածների ոչ կեանքի և ոչ գլուխների մէջ։ Աւետարանը մեզ հետ աւելի լաւ է վարուում, քան աշխարհը. եթէ համարձակէին, կասէք, որ մեզ աւելի է յարգում։ Երկու ամուսինների առաջ նա դնում է մի մեծ ճակատագիր, աղնիւ նպատակներ, որոնց պէտք է հասնել այս աշխարհում, և մի յաւիտենական ապագայ։ Թող երկուսն էս գործադրեն այն պարգևները, որ Աստուած յանձնել

է նրանց. կոչուած լինելով, ամուսինը՝ աւելի արտաքին ասպարէզին, կինը՝ մի ենթակայ դերի, Թոզ նրանք ընթանան միմեանց օգնելով, միշտ աւելի լաւ միանալով: Մենք տեսանք թէ ինչպէս առաքեալը դնում է ամուսիններին վոխադարձ պարտաւորութիւնները: Եթէ նա ասում է կանանց. „Հնազանդ եղէք“, յետոյ ասում է այրերին. „Սիրեցէք“: Այդ պարտաւորութիւնով բացատրւում է միւսը:

——

Ուրեմն սէրը մի պարտաւորութիւն է: Նա երևաց մեզ արդէն երբևէ հմայք, երբևէ երջանկութիւն, երբևէ ամուսնութեան էական տարրը. երևալով մեզ այժմ երբևէ պարտաւորութիւն, նա պիտի հարկադրէ մեզ իր մասին կրկնողութիւն անելու. այնպիսի բաներ կան, որոնց մասին կրկին խօսելը ծրքան լաւ է, բայց դրանից, խօսելով մի և նոյն բաները մասին, մենք մի ուրիշ կերպ կը խօսենք: Պարտաւորութեան տեսակէտը համարեա նոր է սերոյ նկատմամբ: Արդէն նկատեցինք, սէրը վերջապէս կրբռնէ այն տեղը, որ պատկանում է նրան: Նրա այնքան յաճախ անգամ չընճանաչած գեղեցկութիւնը, սրբութիւնը, կրկսայլեն ամենի աչքում: Աղաղակը կարող է ծագրել սէրը, նա շատ քիչ գիտէ, թէ ինչ է այդ: Աստուծու խօսքը յարգում է նրան, ոչ, սխալւում եմ ես, պատկերում է, և մեզ համար երբէք չի ճանաչում չբսիրելու իրաւունքը:

Աւելի վատ նրանց համար, որոնց ես գայթակղեցնում եմ, գուցէ այսպէս խօսելով: Ինչ, ինձ կասեն, սէրը պարտաւորութիւն է, Նա, որ միայն տկարութիւն է ամբողջովին, Նա, որ մեր բնութեան ստոր բնազդումները հետ է կապւած, Նա, որն վիրկնսալանները իմաստութիւնը գիտէը ոսնակոխ անել.—Այո, սէրը, սէրը բուն իմաստով առած, սէրը առանց կեղծ զգայականութեան և նրբահանճար զոմանց, այդ սէրը մի պարտաւորութիւն է. ամուսինների առաջին պարտաւորութիւնը: Այդ սէրը միակ քրիստոնէական չէ. Նա քրիստոնէութեան վատքերից միննն է:

Շատ քիչ անգամ, հեթանոսական հին աշխարհը, նկատել է հեռւից դրան նմանող մի բան: Այն օրից, որ Յիսուս Քրիստոս յայտնել է մարդկանց այս սէրը, Նա իր հերկայութեամբ յառաջ է բերել բարոյական շրջաններ և այնպիսի երկիրներ, ուր Աւետարանը մի ճշմարիտ ներդործութիւն ունի: Իսկ ընդհակառակը, կամենում ենք իմանալ, թէ ինչ անվրիպելի նշանով կարելի է ճանաչել ասպականած դարերը և երկիրները: Այդտեղ չեն գտնում երբէք սէր. կինը այդտեղ գոյութիւն չունի. ընտանիք չկայ այլ ևս այդտեղ. անառակութիւնը, սեռի եթութիւնը այդտեղ գրաւել են սուրբ գգւանքների տեղը. երկրի վրայ գտնւած ամենագեղեցիկ անուննների միևնոյն հետ, սերոյ հետ չնութիւն են գործում: Իրողութիւնն այն է, որ մէջտեղ սէր չկայ, կինքը, նոյն իսկ մոլութեան մէջ, հազւագիւտ է

դառնում այդ ժամանակ. սրտերը չորանում են և մի բան, որ սկսում է տիրապետել, այդ ծաղրն է, կանանց մասին, ամուսնութեան ձանձրութիւնը, ամեն բանի վրայ սկեպտիկական աչքով նայելը։

Այդ ժամանակ գլխականութիւնն ևս ցոլացնում է այդ սխուր ընկերական վիճակը. դուք և դուը կոքոնէք մի դրամայ, մի ըմպան, որտեղ գլխաւորը առարկան կենդրոնացած չըլինի ափեղ հակումներըն կամ վոգն և յաջողութեան հասարակ կնդկրներըն վրայ։ Սրտի մեծ արագիգնանները, այնքան յուզչէ և մաքուր, անհետանում են գրքերից, ինչպէս ձգտում են անհետանալ և ընկերութիւնից։ Աշխարհասիրութիւնը, այս խօսքի ամենատարասելի իմաստով առած, գրաւել է ամեն բան և չիք դարձրել. մարդկայնն հոգին անբուժելի կեղտով ուռնայնասէր է դարձել։

Եւ ուռնայնասէր հոգին ընդունակ չէ սիրոյ, այնքան նրա (սիրոյ) մէջ լրջութիւն և խորութիւն կայ։ Այնքան չնորհք և թափմութիւն կայ։ Սրկու սիրահար ամոլների տեսքը մինչև մի մէջ գտրթեցրել է ամենալաւ գաղափարնէր՝ մաքրութեան և սպրիեշտութեան մասին. ասպետանաձնները, շողոմնները անընդունակ են այդ տեսակ յուզմունքի։

Ձմարիտ սիրոյ մէջ, այն սիրոյ մէջ, որ ամուսինների սպրտաւորութիւնն է, կայ յարգանք, վստահութիւն, աղօթք. կայ նոյնպէս և այն կենդանի Ճաշակը, այն հգօր խթանը, այն սաստիկ կիրքը, որոնք չարժում են մեր գոյութեան ամենանրբերը։ Նրանք, որոնք ամենաբարձր զգայականութեան պատրւակով կամենում են սէրը վերածել հոգու զգացմունքների, մի սխալ Ճանապարհի մէջ են մրտնում։ Կրկնում եմ, չըլինենք աւելի մաքուր, քան Աստուած ասաց է։ Մի զոյգ երիտասարդ ամուսիններ մէջ, որոնք սիրում են միմեանց սրբութեամբ, այսօր ևս երգւում են և դեռ կերգւեն մինչև պատերի վերջը երգերդոյն խօսքերը. „Ով կանանց մէջ ամենագեղեցկիդ“։ „Քո դրօշակդ լինձ, սէրն է“։ „Ես որոնեցի նրան, որին սիրում է իմ հոգին“։ „Սէրը ուժեղ է, երբև մահ“։ Սրբ այսպիսի խօսքեր ծնծաղելի են թրւում, հաւատացած եղէք, որ հասարակական բարքը, մի խոր հարւած է ստացել։

Ըրկարծանալով հասկանալ, որ ամուսինների սէրը, մի պատասխանութիւն է, նրանց երիտասարդութեան պատասխանութիւնը, հասուն հասակի պատասխանութիւնը, նրանց ամբողջ կեանքի պատասխանութիւնը, շատ ընտանիքներ ընկնում են մի այնպիսի գուեհիկ վիճակի մէջ, ուր անհետանում է հմայքը, ուր դադարում են միմեանց Ճաշակը առնել, ուր մոլի և ցուրտ է անում օդապէս չորքը։ Զգուշանանք, այս աշխարհում մի մի լաւ բան՝ ձեռք չի բերւում, և չի պահպանւում՝ առանց ջանքի. Ճմարիտ ընտանիք ունենալու և պահպանելու համար, պէտք է որ պահպանենք ամուսնութիւնը՝ այնպէս, ինչպէս Աստուած սրել է նը-

ըան։ Աբդ, Աստուած աբել է սէրն հետ։ «Տղամարդին, սիրեցէք ձեր կանանց։»

Ինչի համար այս պատուիրանը, ուղղած է մասնաւորապէս տղամարդին։ Պէտք է խոստովանենք, որ այդ մեզ պատիւ չի բերում. այդ նշանակում է որ մեզ հարկաւոր է պաշտօնական կերպով հրամանագրեն սիրելու պարտաւորութիւնը. մեր սրտերը, մի քիչ զուրկ են գործողութիւնից. բացի դրանից, արատաքին գործունէութիւնը մտցնում է մեր գոյութեան մէջ այնպիսի չահեր և զգացումներ, որ աշխատում են նրա մէջ հարկաւորը եղածից աւելի շատ տեղ բռնել։ Կինը ենթարկուած չէ այդ մի և նոյն վտանգին։ «Սէրը, ասում է տիկին դը-Ստայէլ, տղամարդի կեանքի մէջ միայն մի դէպք է, բայց կինոջ կեանքի մէջ՝ մի ամբողջ պատմութիւն է»։ Եթէ մեր մասն երբեմն լաւագոյն է, որովհետև սիրելու պարտաւորութիւնը մեզ հասկացնում է Աստուածանի շնորհով. և սիրելու պարտաւորութիւնը բերում է իր հետ՝ սիրելու երջանկութիւնը. բարձր, կերպարանաւորուած սէրը՝ որ նրան պատկանող տեղն է բռնում, և թոյլ չի տալիս, որ երկրորդական հոգսեր դուրս քշեն նրան։

Ֆ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

—Ո՛չ, սատանան գիտէ, թէ այս ինչ է, գոռաց Սիմէօն Վասիլևիչը ազմուկով յետ թռչելով բազկաթոռի հետ միասին իր գրասեղանից և կատաղութեամբ վայր գցելով պղպատեայ գրիչը այն թղթի վրայ, որ նա ամենամեծ զգուշութեամբ պատրաստում էր մանաւանդովին զեկուցանելու համար։ Մանկանոցից լսուող երեխայի հոգեզմայլ ձայնը, որ րոպէ առ րոպէ սաստկանում էր, վերջապէս համբերութեան սահմանից հանեց Սիմէօն Վասիլևիչին։

—Կանանց ամբողջ խումբ կայ այստեղ, բայց և ոչ մի վայրկեան հանգստութիւն... Ուղղակի երեխային մորթում են, բացականչեց նա իր դատարկ առանձնասենեակում և կատաղութեամբ դուրս վազեց այնտեղից։ Թէպէտ մինչև մանկանոցը հասնելը նա միայն հինգ կամ վեց քայլ պիտի անէր, բայց այդ կարճ միջոցումն իսկ նա վայրկենաբար և խստութեամբ քննութեան առաւ իր բոլոր կեանքի մաշող էութիւնը մինչև այն րոպէն, երբ նա իր առանձնասենեակում դեգերում էր մի լիմար զեկուցման համար, ինչ

Է՝ տարեկան մի վեց հազար րուբլի ռոճիկ ստանալու համար։ Եւ այդ բոլորը, թէ զեկուցումը, թէ կեանքը, թէ տունը և թէ այդ աղաղակը նրան երևում էին մի դատարկութիւն։—Սա ինչ ընտանիք է—... Խանութի հաշիւները... խորանարդները... հիւսուածները... անհաշիւ փող ասես թափում են ծակ կարասի մէջ... անմիտ շըվոթութիւն... և ժամանակ չունեն երեխային նայելու. սատանան տանի ձեզ... Այս բոլորը եփում, եռում էր նրա մէջ, երբ նա աղմուկով և դղրդեցնելով մանկանոցի դուռը հրեց և դուրս.

—Այս ինչ դժոխք է...

Կինը որ բոլորովին պատրաստ էր Մակարովների հետ Պանաևի թատրոնը գնալու, դայեակը՝ բաւական սուր տիւրնիւրով, պառաւ զօքանչը և դաստիարակչուհին, որ աղաղակի վրայ՝ վազել եկել էր միւս սենեակից, ուր նա դաս էր տալիս,—խօսում էին հազար և մի բաներ, խօսում էին անընդհատ, բարձր, ճչալով, ոգեւորուած և այնքան խառն, որ ոչ ոք ոչինչ չէր հասկանում։ Միևնոյն ժամանակ բոլորը պատում էին մի երեքամեայ երեխայի շուրջը, որ համարեա չէր երևում խոնարհած գլուխների և բարձրացրած տիւրնիւրների բազմութեան մէջ։ Երևում էր որ աշխատում էին խլել մանուկի ձեռքից մի բան, և բարձր ու առանց լռելու խօսում էին, մինչև անգամ Սիմէօն Վասիլևիչի կատաղած դէմքը տեսնելուց յետոյ էլ։

—Տո՛ւր, տո՛ւր, հազար մի եղանակով ճղճղում էին կանայքը։

—Իմ մեխերը... սատիկ ճչում էր երեխան։

Երեխայի հետ ունեցած կանանց այդտեսակ անգութ վարմունքը զայրացրեց Սիմէօն Վասիլևիչին։ Առհասարակ նրանք ընդունակ են ամեն տեսակ բարոյական բռնութիւն գործ դնելու իրանց նպատակին հասնելու համար։ Խլում են երեխայի ձեռքից մի որևէ բան և խաբում են նրան ասելով. «Սկա թռչնակը թռչում է» և մանուկը չկասկածելով, բարձրացնում է գլուխը և հէնց այդ րոպէին ածում են ձէրը նրա բերանը։ Սիմէօն Վասիլևիչը մանաւանդ բարկանում էր իր կնոջ վրայ, որի մազերում ցցած էր մի անմեղ ծաղիկ, մինչդեռ նա ոստիկանի նման աշխատում էր խլել երեխայի ձեռից մի ինչ որ բան։

—Սպանո՞ւմ էք վաստին , ի՞նչ է,—ողբաձայն գոչեց Սիմէօն Վասիլև իչը։

—Ի՞նչ էք խելագարի պէս գոռում, վրդովուած ձայնով ասաց կինը.—Նրա ձեռքում մեխեր կան և չի տալիս... Դուք երբէք բան չէք ուզում հասկանալ։

—Ի՞նչպէս է նա մեխերը հաւաքել, դուք ո՞րտեղ էիք կորել...

—Ես միայն մի րոպէով դուրս գնացի, վախվախելով ասաց դայեակը։

—Իսկ ես բոլորը լսեցի,—բարկացած ասաց կինը, շարունակելով երեխայի ձեռքը ձգձգել.—Յետ տուր, ասում եմ, չե՞ս լսում։

—Ախ իմ մեխերս...

Մայրն ու դայեակը աշխատում էին մեխերը ուժով խլել երեխայի ձեռքից։ Սիմէօն Վասիլևիչը ուզում էր նրան սլաշպանել, բայց մանուկը մի այնպիսի սարսափելի ազաղակ հանեց, որ հայրը կանանց վրայ բարկանալու փոխարէն՝ կատաղութեամբ որդու վրայ յարձակուեցաւ։

—Յետ տո՛ւր, անպիտան, այս րոպէիս յետ տո՛ւր, սոսկալի ձայնով գոռաց Սիմէօն Վասիլևիչը։ Խեղճ երեխան տարակուսած նայեց հօրը, բայց արաւ ձեռքերը՝ շարունակելով հեկեկալ։

—Նայեցէք, խնդրեմ, մեխերը ձեռքերը ծակծկել, արիւնոտել է։

—Մինչև անգամ չէր էլ տալիս, սարսափեց մայրը։ Իսկ սա՝ ի՞նչ է։

Երևաց որ կոտրած աթոռի ոտի փոքրիկ անիւն էլ երեխայի միւս ձեռքումն էր։

Այս բոլորը զարմացրեց Սիմէօն Վասիլևիչին։ Նա խորին արհամարհանքով նայեց կնոջ վրայ և ուսերը բարձրացնելով, սկսեց խօսել.

—Դուք միշտ պարծենում էք դէպի երեխաները ունեցած ձեր սիրով, բայց տեսէք ինչո՞վ էք նրանց զբաղեցնում։ Աթոռի անիւը և մեխերը... ահա՛ դրանք են մանուկին ուրախացնում։ Ինչո՞ւ էք այդքան վող մսխում, երևում է որ դուք ձեր երեխաներին ըզբաղեցնելու համար շատ խելք էք գործ դնում։

—Դուք միշտ աշխատում էք ինձ անպատվել, տրտնջող ձայնով ասաց կինը և արտասուքը փայլեց նրա աչքերում։

Դուք էլ ձեզ համար մի երևելի նպատակ էք շինել անպատուաբիւններին մասին երազելով։

Սիմէօն Վասիլևիչը այլևս ուշադրութիւն չդարձնելով իր լացող կնոջ վրայ, դուրս գնաց սենեակից՝ դուռը շրխկացնելով։ Բարձրաձայն և ծանր քայլերով անցաւ նա իր առանձնասենեակը, պատռտեց, ճմլեց և ձգեց զամբիւղը արդէն փչացրած զեկուցման թերթը. յետոյ ընկաւ բազկաթոռի վրայ, կատաղութեամբ աջ ու ձախ քաշքշեց նրան, վերջապէս նստեց և սկսեց գզգզել իր ժամանակից առաջ սպիտակած մազերը։

—Ախ, Աստուած իմ։—Նրա մտքերը աւելի և աւելի մռայլ կերպարանք էին ստանում։ Հէնց այդ մեխերը և աթոռի անիւները ապացուցանում են նրա ընտանեկան կեանքի դատարկութիւնը։ Ուրեմն հարիւրներով փողը ինչի համար են ծախսում, եթէ երեխային անգամ չեն կարողանում զբաղեցնել. այդ դեռ ոչինչ, բայց երեխան այդ մեխերը կարող էր բերանը դնել... խեղդւել, մեռնել... ընտանեկան այդ բոլոր հոգացողութիւնները ինչի՞ համար են, և ինչ աւելի բարձր նպատակ ունին։

—Եւ կամենում են հիմա կանանց կուրսերը փակել...

Բարձր ձայնով ասաց Սիմէօն Վասիլևիչը և կրկին սկսեց անիծել աշխարհը։ Միայն նա չէր այդ դրութեան մէջ, այլ նրա տան անդամներից ամեն մէկը տանջւում էր իր սեփական ցաւով։ Թէպէտ երեխան լռեց, բայց ամենքը դժբախտ էին համարում իրանց և աշխատում էին մէկ մէկու մեղադրել։ Մինչև անգամ դայեակն էլ էր անիծում իր օրը և իր տիրուհուն. իսկ այս վերջինը լալիս էր իր ճակատագիրը, որ նրան մի այդ տեսակ կոպիտ մարդու ձեռքն էր ձգել։ Մի ամբողջ ժամ այդ չարագուշակ մըտքերը տանջում էին Սիմէօն Վասիլևիչին։ Նա պարզ տեսնում էր այժմ, որ իր նպատակին չհասաւ, թէպէտ ամբողջ կեանքը զոհել էր իր ընտանիքի երջանկութեան համար։

Զանգակի սուր ձայնը վերջ դրաւ ամենքի տանջանքին։

— Ա՛խ, երևի Մակարովներն եկան, գոչեց Սիմէօն Վասիլևիչը և բուրկացած բաճկոնակը հանելով՝ վազեց դէպի լացարանը, որ վարագոյրի ետևումն էր։

Շուտով դուռը բացուեց և երևաց Սիմէօն Վասիլևիչի կնոջ գլուխը։ — Մակարովներն եկան, թոյլ ձայնով արտասանեց նա։

— Գիտեմ, ատամները կրճտելով գոռաց Սիմէօն Վասիլևիչը և աստիկ ոյժով սեղմեց լացարանի փականը։

Կէս ժամից յետոյ քառանիստ կառքը տանում էր Սիմէօն Վասիլևիչին, նրա կնոջը և Մակարովներին Պանայևի թատրոնը։

— Ես ուզում էի բրդեայ թաշկինակս ծածկել։

— Բայց տաք է... ես էլ էի ուզում...

— Ասում են, որ հոդազօրծական վերանորոգումը յետաձգած է, և ահա այդպիսով փոքր առ փոքր խօսակցութիւնը սկսեցաւ։

Մինս առաւօտը ժամի տասին դեռ լռութիւն էր տիրում ամբողջ տանը։ Բայց ահա Սիմէօն Վասիլևիչը զգուշութեամբ բաց է անում աննշարանի դուռը և փափուկ հողաթափները հագած՝ անշշուկ քայլերով անցնում է իր առանձնասենեակը։ Այնտեղից վերցնում է լրագիրների նոր համարները և պապիրոս ծխելով մտնում է սեղանատունը, ուր նրա համար արդէն պատրաստ է ինքնաեռը։

Սիմէօն Վասիլևիչը հետաքրքրութեամբ կարդում էր հեռագիրները, ուր հաղորդում էին Վիլհելմ կայսրի դէպի Աւստրիա անելիք ճանապարհորդութեան մասին։ Նրա ուշադրութիւնը ընդհատեց իր մանուկի քաղցրիկ ձայնը, որ հազիւ-հազ լսւում էր մանկանոցից։ Սիմէօն Վասիլևիչը յանկարծ մտաբերեց իր զազանական վարմունքը երեխայի հետ։ Ինչպէս յիմար էր նա երէկ իր կատաղութեան ժամանակ, և ոտքը այնպէս տրոփեց, որ կարծես ուզում էր երեխին ոչնչացնել։ Այո՛, նա զգում էր, որ շատ ու շատ յանցաւոր էր իր որդու առաջ, իսկ նա ճչւողում էր, ինչպէս թըրչնիկը արշալոյսի ժամանակ։ Սիմէօն Վասիլևիչը այլ ևս չըհամբերեց, թողեց լրագիրը և ուղղելով իր խալաթի գօտին՝ գնաց մանկանոցը։

Երեխային արդէն հագցրել էին, և նա մեծ ոգևորութեամբ մի ինչ որ բան էր պատմում դայեակին։ Երբ Սիմէօն Վասիլևիչը ներս մտաւ, նա իսկոյն լռեց, դնելով հօր վրայ երեկւայ անշարժ, տարակուսական հայեացքը։

—Է՜հ, ի՞նչպէս ես, մանկիկս, մեղմ ձայնով ասաց Սիմէօն Վասիլևիչը, ձեռքով փայփայելով նրա գլուխը, բայց որդին չուրախացաւ հօր այդ գգւանքով, և Սիմէօն Վասիլևիչը լաւ հասկացաւ դրա պատճառը։

—Թաթիկդ տո՛ւր ինձ, մանկիկս, սւելի քաղցրութեամբ ասաց Սիմէօն Վասիլևիչը։

Դայեակն էլ շտապեց խրատել երեխային՝ ասելով. «Համբուրի՛ր հօրդ ձեռքը, իսկ յետոյ քո թաթիկը տուր նրան»։ Վասեան հազիւ բարձրացրեց սառը և թոյլ ձեռքը, և յետոյ հազիւ մօտեցրեց իր շրթունքներին նրա աչքը։

—Տե՛ս, ի՞նչպէս բարկացոտն է։

Սիմէօն Վասիլևիչը շատ շփոթւել էր երեխայի այդ տեսակ վարմունքից, ուստի սւելացրեց նա իր դգւանքը, և դրկելով մանկան բարակ մարմինը՝ խօսեց.—Ապա՛, ինքդ լաւ մտածի՛ր, դու վերցնում ես մեխերը, և ձեռքդ արիւնոտում. բայց երբ բերանդ դնէիր, կուլ տայիր... Ի՞նչիդ էին պէտք քեզ այդ անպիտան բաները... աթոռի անիւը և մեխերը. ի՞նչ խաղալիկներ են դրանք... մի՛թէ մայրդ քեզ խաղալիկներ չի տալիս։

—Ո՛չ, ես մեխերն եմ ուզում, թախանձում էր երեխան։

—Հիմա՞ էլ ես ուզում։

—Այ՛ո, ուզում եմ։

—Դէ՛, լաւ, հիմա ո՞ւր են մեխերը,—ո՛ր տեղ գտար, ցոյց տո՛ւր։

Երեխան բոլորովին կերպարանափոխւեց, և բռնելով հօր ձեռքից՝ համբուրեց նրան։—Դնանք, ցոյց տամ։ Պահարանում պահեցին։

—Դէ՛հ, դնանք, դնանք։

Սիմէօն Վասիլևիչը մի կողքի վրայ թեքւած՝ հետևում էր

որդուն։ Նրանք մի քանի քայլ արին միջանցքի մէջ և կանգնեցին պահարանի առաջ։ Երեխան մատով ցոյց տւեց հօրը մի ինչ որ փոքրիկ արկղիկ, որը երևում էր պահարանի գլխին։

—Ա՜հա, սրա մէջն է, վերցրու՛։

—Շատ բարի, ահա՛ քեզ արկղիկը։ Ձշմարիտ որ մեխերը նրա մէջ են.—քեզ ինչ...

—Ա՜խ, հառաչեց դայեակը,—պահելիս նայում էր, և չէ մոռացել տեղը... իսկ մենք կարծում էինք, որ ուրիշ տեղ ենք պահել։

Երեխան շարունակում էր քաշել հօր խալաթի փեշից և բացականչում էր.

—Ա՛յ, մուրճը,—վերցրու՛ մուրճը։

—Ո՞րտեղից վերցնեմ, հո դեակս։

—Ա՛րի, արի, ա՛յ, այստեղ։

—Դէ՛, լաւ, դէ, լաւ, գնանք։

Մանուկը տարաւ հօրը խոհանոցը։

—Ա՛յ, այստեղ է։

Սիմէօն Վասիլևիչը զարմացած՝ նայեց դայեակին, որը չըգիտեմ, ինչու էր շատ ուրախացել.—տեսէ՛ք, խնդրեմ, գիտե մուրճը որտեղ են պահել... բերէ՛ք, խնդրեմ, Ա՛գաոեա Պետրովնա։

Նա կայծակի նման թռաւ խոհանոցը, իսկ հայր և որդի շարունակեցին խօսակցութիւնը։

—Այս րոպէիս դայեակը մուրճը կբերէ, յետոյ ինչ պէտք է անենք։

—Պէտք է նրանով բևեռենք։

—Ի՞նչը, ինչ պէտք է բևեռենք։

—Աթոռի ոտիկ, գիտես, գե-ղե-ցիկը... անիւը...

—Այդ աթոռի անիւն ես ասո՞ւմ։

—Այո՛, այո՛, այդ կոլորակը... որ պտոյտ է գալիս...

—Ա՛գաոեա Պետրովնա, ասաց Սիմէօն Վասիլևիչը դայեակին, որը տուն մտաւ մուրճը ձեռքին,—դուք անպատճառ պէտք է աթոռի անիւը գտնէք։

—Այդ ինչո՞ւ համար։

—Չեմ հասկանում... ո՛ւր է, որոնեցէք խնդրեմ։

—Այստեղ է, այստեղ սրտաշարժ ձայնով ասաց մանուկը և նորից քաշքշեց հօրը։

—Դէհ, գնանք, գնանք։

—Ախ, ի՜նչ հնարագէտ է, շշնջում էր հիացած դայեակը, գլուխը շարժելով։

—Դէ, գնանք, տար, տար ինձ... բայց ո՛ւր է աթոռի անիւը։

Վերջապէս բերին երեխայի պահանջած բոլոր առարկաները։

—Այժմ ի՞նչ պիտի անենք։ Ա՛հա քեզ անիւը, մուրճը, մեխերը... տես, լմնար խօ չես, ինչի՞դ են քեզ պէտք այս բոլորը։

—Ա՛հա, այստեղ պէտք է խփէք, ցոյց տուաւ երեխան սեղանի ծայրը։ Նա այլ ևս ուշադրութիւն չէր դարձնում հօր յանդիմանութեան վրայ։

—Ի՞նչը, այս ո՞տը սեղանի վրայ բևեռենք։

—Այո՛, այո՛, բևեռենք, դրա վրայ բևեռենք։

—Սեղանի՞ն, բայց ինչո՞ւ համար։

—Ինձ հարկաւոր է...

Երեխան պատրաստ էր լալու, բայց Սիմէօն Վասիլևիչը շտապեց կատարել նրա խնդիրը։ Վերջապէս անիւը բևեռեցին, բայց այնպէս որ նա սեղանից յառաջ էր ցցած։

—Այսպէ՞ս, տարակուսած հարցրեց հայրը։ Երեխան մատով շօշափեց անիւը, որ իսկոյն պտոյտ եկաւ։ Այն ժամանակ նրա երեսը յանկարծ լուսափայլեց, աչքերը ուրախութեամբ վառուեցան և բարձր ձայնով ասաց.

—Պատրաստ է, դայեակս, այժմ տուր մկրատդ... ես ինքս կըսրեմ։

Սիմէօն Վասիլևիչը մինչդեռ զարմացած այս խօսքերից մտածում էր, դայեակը իսկոյն հասկացաւ ու բացականչեց.

—Ախ, իմ սիրելիս, չես մոռացել, ախ, հոգեակս... Մենք պատուհանի առաջ կանգնած նայում էինք փողոցին,—սրողը մայթի վրայ ինչ որ սրում էր։ Մկրատս բոլորովին բթացած էր և ես մտածում էի. արդեօք չի՞ գալ նա մեր բակը... Մենք

երկար նայում էինք, սրողը վերջացրեց, մեզ մօտ չեկաւ, այլ ուրիշ տեղ գնաց։ Ես բարկացայ, ոտս գետնին խփեցի և ձեւացրի իբր թէ լաց եմ լինում։—Ի՞նչ պէտք է անեմ այժմ բթացած մկրատով... Մի լար, դայեակս, գրկելով և համբուրելով ինձ ասում է սանիկս, ես ինքս կըսրեմ մկրատդ, ես գիտեմ ինչպէս պէտք է սրել, ես ամեն բան գիտեմ, ինչ որ ուզում ես՝ կըկատարեմ...

Այս պատմութեան ամբողջ ընթացքում երեխան անդադար կոչում էր—տուէք ինձ մկրատը, ես կըսրեմ, տեսնում էք ինչպէս պատրաստ է գալիս...

—Դրանից յետոյ մի շաբաթ է անցել։

—Դու այլ ևս չէս լալ, ասում էր երեխան, թրևեցնելով դայեակին դէպի իր մեքենան... տուր ինձ մկրատդ։

Երեխան արդէն հասել էր իր մեքենային, բայց Սիմէօն վարպետը բռնեց նրան։—Դու չես կարող սրել, Հոգեակս, յուզած ըղձում էր նա գրկելով որդուն և առատօրէն համբուրելով նրան...

Ահա շատ անգամ ինչ է նշանակում երեխայոց այդ անհասկանալի քմահաճութիւնը, այդ անմիտ սղաղակը, որ դադարեցնելու մի միջոց կայ միմիայն—վախեցնել երեխային խիստ հրամաններով կամ աղաղակով։ Երեխան ձանձրանում է խանութներից գընած խաղալիկներից. այդ կարգօնի և փայտեայ մարդիկն ու անասունները նրա վրայ տպաւորութիւն չեն թողնում։ Մանուկի քընքուշ սիրտը, որ մինչև անգամ կարողանում է կենդանացնել անշունչ տիկնիկին, տալիս է մարդկային իսկական զգացմունքով և առաջնորդւում է սիրոյ թարմ և անկեղծ գգւանքներով։ Մեր այժմեան ընտանեկան կեանքը այնպիսի պայմանների մէջ է գտնւում, որ անկարելի է հետազօտել, որ երեխի մէջ հէնց առաջին օրերից արտայայտւող սիրոյ պատւական զգացմունքը, կանոնաւոր զարգացումն ստանայ։ Այժմեան ընտանիքի անդամները անհամեբաշխ են, նրանցից ամեն մէկը ունի իր առանձին հոգսերը և ըզբաղւած է իր սեփական վշտերով։ Նրանք միայն մեծ դժւարութեամբ կարողանում են պահպանել իրանց արտաքին համերաշխութիւնը։ Շնորհիւ ընտանեկան այդ անկանոնութեան՝ մանկական

սրտի ամենալաւ արտայայտութիւնները՝ աննկատելի են լինում... Երեխան լալիս է, տանջւում է, բայց ուրիշները նրանից հարիւրապատիկ աւելի են տանջւում և այդ պատճառով շտապում են նրան հանգստացնել կամ բարկանալով նրա վրայ, կամ մի խաղալիկ ձգելով նրա ձեռքը: Նրանք չեն աշխատում պարզաբանել մանկական սրտի իսկական ձգտումը, որը շատ անգամ անկարելի է գոհացնել հիւսւածներով կամ խորանարդներով:

Ահա ինչ մտքերով էր զբաղւած Սիմէօն Վասիլևիչը՝ մինչև հասաւ իր ծառայութեան տեղը, բայց մի քանի վայրկեանից յետոյ դիւանատան դատարկութիւնը առաջւան պէս ճնշեց նրա սիրտը:

Երբ Վասօի մայրը գաղթնեց, Սիմէօն Վասիլևիչը արդէն գընացել էր: Դայեակը մեծ հրճւանքով պատմեց նրան այս անցքը: Տիկինը լուռ լսում էր այս պատմութիւնը և սուրճ խմում: Բայց երբ դայեակը խօսելը վերջացրեց, նա դժգոհ կերպով յետ քաշեց դատարկ թասը և հետևեալ եզրակացութիւնն արաւ այդ բոլոր պատմութիւնից.

—Երէկ գոռում էր, թէ ինչո՞ւ ես մեխերը խլում երեխայի ձեռքից, իսկ այսօր ինքն է նրա ձեռքը տալիս... Իսկ երբ երեխան կըխեղդւի մեխից—ո՞վ կըլինի մեղաւորը: Ի հարկէ ես, այո, միշտ այդպէս է լինում. նա դառն հոգւոց հանեց և այդ տրամադրութեան տակ սկսւեց և շարունակւեց նրա օրը մինչև երեկոյ, որի համար և անիրաւ տեղը վիրաւորւած լինելը աստիճանաբար արտայայտում էր օրւայ ամեն մի չնչին դէպքում:

«Լաւ է որ հոգիները դուրս չեկաւ»—ահա թէ վերջապէս ինչ եզրափակեց ծառան այդ օրւայ համար՝ պառկելով գիշերւայ ժամի երեքին *):

ՄԱՐՈՒԽ

---

*) Այս գեղեցիկ պատկերը պատկանում է ռուսաց ժամանակակից ժողովրդական հեղինակներից մէկի՝ Գլէբ Ուսպէնսկու գրչին: Մենք փոխադրեցինք այս յօդւածը նրա համար, որ սա հեղինակի ուրիշ գրւածքներից աւելի նւազ չափով է վերաբերում բուն ռուս ժողովրդի կենցաղավարութեանը, եւ աւելի ընդհանուր մարդկային մտքեր է շօշափում: Թարգ. Ծանօթ.

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՍԱԿԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

[Առաջարկ. 1891 թ. ծնողների ժողովում]:

Այն հարցը, թէ ե՞րբ պէտք է սկսել ուսուցանելու մանուկին, այդ դժուար հարցերից մէկն է, որին լուծելը մեծ կարևորութիւն ունի մեր դարում:

Ինտելլիգենտ ընտանիքների որդիները առհասարակ շատ շուտ են սկսում ուսուցանել, առանց մտածելու վաղաժամանակ ուսուցման վատ հետևանքների մասին: Այդպիսի դէպքերում երբ մանուկները հիւանդանում են, ծնողները խոլոյն բժիշկների են դիմում: Բժիշկը, մանաւանդ ընտանեկան բժիշկը, աւելի լաւ ճանաչելով մանուկներին, քան նոյն իսկ ծնողները, կարող է տալ շատ թանկագին ցուցումներ հանգամանքներին նայելով և այդ տեսած ցուցումները ի հարկէ արգելք են լինում ուսուցման:

Այսպէս ասած «ուսման հակացուցումի» թւին վերաբերում են, ժառանգական հակումն դէպի ջղային հիւանդութիւնները, հոգեկան, թոքերի և զանազանհիւանդութեան սերմեր, որոնք ևայլն ևայլն:

Թոքախտով և ժառանգական հիւանդ ծնողների մանուկները, փոքր հասակում կարող են ունենալ միայն տեսք. այնուամենայնիւ կարող են և ունենալ հիւանդութիւնների սերմեր, որոնք մարմնի ֆիզիքական զարգացման հետ աճում են: Այդպիսի մանուկներին բժիշկները կամ բոլորովին հեռացնում են դպրոցական կրթութիւնից և կամ թոյլատրում են ուսուցանելու աւելի ուշ, չափաւորապէս և զգուշութեամբ:

Եթէ մանուկի դէմքի գոյնը լաւ է, բաւական լաւ սնուցած է, հասակով ոչ բոլորովին կարճ է, նոյնպէս և ծանրութեամբ ոչ պակաս, այն ժամանակ բժիշկը ոչ մի արգելք չի գտնում ուսուցանելու մանուկին: Մի քանի բժիշկները առաջարկում են մանուկներին ուսուցանելու սկսել ատամները փոխելու ժամանակից, գանգի բաւական աճելու ժամանակ: ուրիշները էլ (Բագինսկից) գտնում են, որ ընութիւնը բնական յայտնութիւններով չէ որոշում ուսուցման ժամանակը: Եթէ մանուկը հիւանդ չէ և հիւանդանալու տրամադրութիւններ չկան, բաւական է այդքանը սկսելու համար ուսուցումը, որ հասակից որ լինի. բժիշկներից շատերի կարծիքը այդ է: Բժշկից յետոյ, առհասարակ դիմում են մանկավարժներին հարցնելով թէ կարելի է մանուկին ուսուցանել այդ հասակում:

Այն մանկավարժները, որոնք մասնագէտ են տարրական ուսուցման մէջ, մանուկի ամեն հասակը յարմար են համարում ուսուցման և ամեն տեսակ կրթութեան։

Մանուկների աշխատական կրթութիւնը մեծ յաջողութիւն է գտել այս դարերի մէջ. Պեստալոցցին „ինչպէս Հերդրուդան ուսուցանում է իր որդիներին“ գրքի երևալուց յետոյ։

Պեստալոցցիից յետոյ Ֆրէբէլը ստեղծեց նոր հիմնարկութիւնները—«մանկական պարտէզները», որոնք պէտք է ծառայէին ընտանիքից դէպի ընդհանրական ուսումնարանը ձգտող աստիճանների փոխարէն։ Եւ իսկապէս Ֆրէբէլեան մանկական պարտէզները միջոց տվին մեթոդները գտնելու, ուսուցանելու համար մանկական այն հասակից, որ դեռ մինչև այդ ժամանակ ուսուցման համար փոքր էր համարւում։ Մենք սովորեցինք կրթել խելոնները, կոյրերը, խուլերը, համրերը և դրանից կարելի է հասկանալ, որ ընդունակ ենք կրթելու։ Նաև լսողութեան, տեսողութեան և լեզուի կանոնաւորութիւն ունեցողները. մի խօսքով մենք գտել ենք միջոց ուսուցնելու մանուկին նրա ամենաէութը հասակից սկսած։

Ըստ երևոյթին, ուսուցչի վարպետութիւնը նրանումն է կայացած, որ նա կարողանայ քիչ ժամանակւայ մէջ, քիչ ջանք գործ դնելով որքան կարելի է շատ բան լցնի մանուկի գլխի մէջ նրա փոքր հասակից սկսած։

Կարդալ, գրել և նոր լեզուի ուսուցումը սկսւում է երեք տարեկան հասակից։ Մինչև իսկ կազմւել է մի առանձին գրականութիւն 6 տարեկան հասակի համար. գրականութիւն, որը խօսում է կաւաուներից, մրկնիկներից, չնիկներից և նապաստակիկների մասին։

„Մի քանի ընտանիքներում հրահանգւում են ընտանեկան տրակտատներով, որոնք միայն այն դէպքում նշանակութիւն ունեն, երբ ընտանեկան կեանքի պայմանները և տղայոց հասակը կըմնան նոյնը, ինչ որ առաջ եղել են. Ամեն ժամանակ էլ չի կարելի կրթել մանուկին այնպէս, ինչպէս մեզ կրթել են մեր ծնողները։ Մանուկները, մանաւանդ աղջիկները ուսումնարաններում այժմ այնպէս դիրք չունեն, ինչ որ հին ժամանակն էր, երբ „մենք սովորում էինք մի բան՝ ինչ կերպ որ լինը“։

Այժմ մանուկները դաստիարակւած են անընդհատ, շատ և ծանր այնպիսի աշխատութիւններով, որոնք պահանջում են առողջութիւն և ամրակազմութիւն։

Բացատրելով այն սովորական ձևերի անպէտքութիւնը, ինչ որ գործադրում են ծնողները իրանց մանուկներին սովորացնելու ժամանակ, մենք կաշխատենք բացատրել, հասնել այն նպատակին, որին պիտի ձգտել

ուսուցման սկզբի ժամանակ, դրա հետ միասին մենք ցոյց կըտանք միջոց ուղղելու չտապողութեան կամ անշտապողութեան նախատակին հասնելը։

Ծնողների և ընտանեկան դաստիարակութեան գլխաւոր նպատակներից մէկն այն է, որ մանուկներին աշխատում են շուտով ուսումնարան ուղարկել և առանց յետամնացութեան առաջացնել նրանց ուսուցման ընթացքի մէջ։

Ի նկատի ունենալով այդ, ցանկալի էր նշանակել խմբութեամբ, թէ քանի հասակի մանուկներ են, որոնք կարողանալին հասնել ընթացքի վերջին աստիճան յետ ամնացութեան կամ ընդհատման։ Դժբողտարար ստատիստիկան մեր մէջ թէև շատ թոյլ է, բայց թանկագին տեղեկութիւններ է տալիս։

Օգտուենք Ա. Վ. Դուբրովսկու հետևեալ աշխատութիւնից՝ „Համաթարանները և միջնակարգ ուսումնարանները Ռուսաստանի 50 նահանգներում. 1880 թ. մարտ 20-ի տեղեկագրութեան համաձայն Ս. Պ. 1888 թ.“։

Այս ընդարձակ աշխատութիւնից մենք միտնացոյց կանենք այն տեղեակին վերայ, որ ցոյց է տալիս գիմնազիաներում և դպրանոցներում ուսանող աշակերտուհիների հասակը։ Այս աղիւսակում ներքանչիւր դասարանի համար զանազան հասակների աշակերտաց թիւը տոկոսով է հաշուած։ Թողնելով 8 և 9 տարեկան հասակը, աղիւսակից երևում է, որ նախապատիւ է, կազմենք մի համեմատութիւն Ա. և Զ. դասարանների մէջ եղող աշակերտների հասակների։ Երևում է հետևեալը։ Ա. դասարանի մէջ եղող 100 անձից 10, 11 և 12 տարեկան հասակներից համապատասխանում են գիւղական, կլասիկական և էքսալական գիմնազիաները Զ. դասարանի հասակները (16, 17, 18 տար.) հետևեալ թիւերը։

	Գիւղ. գիմնազիա	Կլասիկ. գիմնազիա	Էքսալական գիմնազիա
	17	20	12
10 տար. . . Ա. դաս.	9	6	2
16 տար. . . Զ. դաս.	$\frac{1}{2}$	$\frac{1}{4}$	$\frac{1}{6}$
	46	37	32
11 տ. . . . Ա. դ.	30	19	8
17 տ. . . . Զ. դ.	$\frac{2}{3}$	$\frac{1}{2}$	$\frac{1}{4}$
	32	29	31
12 տ. . . . Ա. դ.	37	27	15
18 տ. . . . Զ. դ.	1—/—	1—	$\frac{1}{2}$

Այս աղիւսակից մենք կարող ենք եզրակացնել, որ էքսալական ուսումնարանի ընթացքը միևչև իսկ 12 տարեկանները առանց յետամնացութեան չեն կարողանում անցնել։

Կլասիկական և գիւղական գիմնազիաների կուրսը աւելի ծանր է

12 տարեկաններըի համար, իսկ իգական գիմնազիաներըի, հոգևոր դպրանոցներըի կուրսը աւելի ծանր է ինչպէս որ այդ երևում է Դուբրովսկու աղիւսակից։

Եւ այսպէս, մի որ և է ուսումնական հիմնարկութեան Ա. դասարանի համար մանուկին պատրաստելու ժամանակ, պիտի յիշել, որ 12 տարեկան մանուկները մնում են ցած դասարաններում, իսկ 12-ից յետոյ առանց մնալու կարողանում են անցնել։

Եթէ Դ. դասարանի աշակերտներըի թիւը նշանակենք հաստակներով, երևում է, որ միևնոյն իսկ վիճակահատակները կարողանում են առանց արգելքի առաջ գնալ։ Ուրիշ խօսքերով մի օրինակ։ Տասն տարեկան հատակի մանուկներից $^1/_4$ մասը հազիւ հասնում են կլասսիկական գիմնազիայի Ա. դասարանին. զինուորականի $^1/_2$, իսկ ըէալականի $^1/_6$. եթէ միևնոյն մանուկներից 13 տարեկաններըը հանենք դնենք չորրորդ դասարանում, նրանցից բոլորը զինուորական գիմնազիաներըի մէջ կարողանում են հասնել միևնոյն բարձր դասարանը, իսկ միւս գիմնազիաներում՝ հազիւ $^2/_3$ մասը։

Հասկանալի է, որ այնքան լայն եզրակացութիւնը, որ հանում է 1880 թուի ստատիստիկայից, կարող են միևնոյն այժմ վիճակութեան ենթարկուած լինել։ Այդպիսի դէպքում բացատրութիւն կարող են տալ մեզ ուսուցիչները և առհասարակ նրանք, որոնք մօտ են կրթական գործին։

Այն ուսուցիչները, որոնք յիշատակարանների մէջ նշանակել են աշակերտների տարիքը, կարող են ստուգել վերոյիշեալ եզրակացութիւնը և կարող են նոր հետազօտութիւնները աւելացնել հասակի խնդրի մասին։

Մեր 20 տարւայ ուսումնական գործունէութեան միջոցին մենք հասանք հետևեալ ելքի։

Բարձր դասարաններում համարեա թէ չեն հանդիպում այնպիսի աշակերտները, որոնք իրանց ուսումը սկսած լինէին 7 տարեկան հասակից առաջ, այսինքն միևնոյն այդ տարիքը։ Իսկ եթէ ուշադրութիւն դարձնենք թէ արական և թէ իգական ուսումնարանների ուսանողների այն մասի վրայ, որոնք առանց մնալու բարձրացել են միևնոյն բարձր դասարանները՝ կգտնենք, որ նրանք իրանց ուսումը ստացել են 7—8 տարեկան հասակից հասնելուց յետոյ։ Իսկ թոյլ և դասարաններում մնացող աշակերտների մէջ հանդիպում են այնպիսիները, որոնց ուսուցել են 6 և աւելի պակաս տարիք ունեցած ժամանակից։ Ա-ռ հասարակ շատ փոքր հասակից սկսածները երբ սկսում են բարձրանալ, կորցնում են իրանց թեթևքի աշխոյժը և ինքնաշխատութեան ընդունակութիւնը։

Զբաղելով զուգընթաց դասարաններում, շատ յաճախ նկատում է այն զանազանութիւնը, որ տիրում է միևնոյն հասակի սովորողների մէջ։ Քննու-

Թվենից երևում է, որ Թոլլ աշակերտները մեկտ նրանք են, որոնք երանց ուսանելը աւելի շուտ են սկսել։

Նշանակութիւնն չըտալով մեր յատուկ եզրակացութեանը, աշխատենք կազմել նրանց այնպէս, որ ծնողներին կարողանանք մեջոց տալ հըսկելու ուսանողների տարիքների ազդեցութիւնը ուսանելու մէջ և կարողանան ստուգել մեր դիտողութիւնները։

Այժմեայ դպրոցները 11 տարեկանից ցած մանուկների համար ծանր են. 12 և 13 տարեկանները աւելի հաւանական են երևում անցնելու ընթացքը առանց յետամնացութեան, եթէ մանեն նրանք ոչ թէ առաջին, այլ պատրաստական դասարանները. որքան որ մանուկը ուշ մտնի ուսումնարան, այնքան նա հետաքրքիր է լինում և եռանդոտ դէպի ուսումը։

Այժմ կըհարցնէք թէ, եթէ այդ առաջարկութիւնը ճիշտ է, ինչ նպատակով 8 տարեկանին նատեցնում են գրքի առջև։ Կարդալու մեքենականութիւնը, գրելը և հաշուելը լուրացնել շուտով և լաւ կարելի է 8-ից մինչև 9 տարեկան հասակներում։

Նատեցնելով մանուկին գրքի առջև, անկասկած յայնացնում է և մանուկի մտայնի շրջանը։ Երևակայեցէք, թէ ինչ տեսակ դիտողութիւններ կարող է հաւաքել իր շրջապատող կեանքի մասին 5 տարեկան մանուկը և ինչ լեզէ տեղեկութիւնները նա պիտի քաղի այն գրքերից, որոնք կոչւում են „Մանկական գրականութեան գրքեր"։

Կրթութիւնն սկսելու ժամանակ, պէտք է աշխատել մտցնել մանուկի մէջ սէր դէպի մտայնի աշխատութիւնը թէ դպրոցի մէջ և թէ նրանից դուրս։ Պէտք է աշխատել որ ոչ թէ միայն մանուկը մնայ առողջ և առանց դասարանները մնալու անցնի բոլոր ընթացքը, այլ գլխաւորապէս նրա վրայ, որ նա չըկորցնի աշխոյժը և սէրը դէպի մտայնի աշխատութիւնը մինչև այն ժամանակ, երբ նա դպրոցից դուրս գալով, մտնում է կեանքի մէջ։

Ոչ մի փորձած ձիապան չի վճռել մտրուկին (ձիու քուռակ) ժամանակից առաջ լծելու, թէև նրան համոզել աշխատէին թեթևամիտները, որ մտրուկը երանց կարծիքով ուժեղ է և ամուր ու կարող է լծվել առանց վնասելու իր առողջութեանը։ Այո, փորձած տէրը չի վճռել այդպիսի մտրուկին լծել մանկական սայլի անգամ։ Այդտեղ ըհասկէ տէրը մտածում է, որ թէ մտրուկը չի վչանալ, բայց լաւ ձի էլ չի կարող լինել, քանի որ նա ժամանակից առաջ եներթարկուելով լծի՝ անպէտք կըլինի հասակը առած ձիերի՝ արած գործերի մէջ։

Թող ծնողներն էս մտածեն այդպէս, այն ծնողները, որոնք վճռում են լծել մանկան ուսուցման ժամանակից առաջ։

Կրճատելով մանուկի անկախութեան և ազատութեան ժամանակը, Թող մտածեն, Թէ որքան ոյժ է պէտք այն հասակաւորը մարդու համար, որը սկսում է մտնել մի անկախ գործունէութեան մէջ, երբ դպրոցից դուրս է գալիս դէպի կեանքը, Թող մտածեն այդ ծնողները և աշխատեն ինամք տանել պահպանելու մանուկի Ֆիզիքական ոյժը և առողջութիւնը նաև մտային եռանդը, քանի որ դեռ ուսումը չէ սկսել։

Պ. ԼԻՏՎԻՆՍԿԻ

«Воспитаніе и Обученіе» 1891 № 5.

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՑԱՄԱՌՈՒԹԻՒՆԸ ՆԻ ՆՐԱՆՑ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Դաստիարակը իր գործունէութեան մէջ յաճախ կանգ է առնում մի դժուար խնդրի առաջ.—Թէ ինչպէս պէտք է ինքն անցնի և իր սանիկին էլ ողջ և առողջ անցկացնի դաստիարակութեան զանազան դժուար շրջաններն մէջից։ Դաստիարակութեան արուեստը ուսուցանում է որոշեալ աստիճանի ուղիղ ընթացքով գնալ, ոչ չափազանց շատ, ոչ չափազանց քիչ, ոչ չափազանց վաղ, ոչ չափազանց ուշ։ Այն ինքն ըստ ինքեան գովական ձգտումը—Թէ կարելի է առանց դուրս ժամանակ կորցնելու, աւելի վաղ սկսել երեխայի մտաւոր զարգացումը, շատ անգամ, ուսուցման ժամանակ, ձգում է աւելորդ կարգապահութեան, խծբխծ ամբարտաւանութեան և մանկան ուժից վեր աշխատութեան պահանջմունքի մէջ. դարձեալ այն ինքն ըստ ինքեան շատ գովական ձգտումը—Թէ ուսուցումը պէտք է կատարելապէս մատչելի և նկատողական անել, յաճախ այնպիսի իրերը բացատրելու ցանկութիւն է դառնում, որոնք լաւ ծանօթ են մանուկներին և որը նրանք ուսուցչից էլ վատ չեն իմանում. ձգտել մանկան զգացմունքները զարգացնելու, նրան մարդասէր և մեծահոգի մարդ դարձնելու, այնպէս որ մարդկային ոչ մի բան նրան օտարոտի չլինէը, շատ անգամ դառնում է զգացողութեան արուեստական և շատ զօրեղ գրգռումն, կեղծ զգացողականութիւն, բնաւորութեան փխրունութիւն և լացկանութիւն. այն ձգտումը, որ աշխատում է տակուն բնաւորութիւն կազմակերպել, ինքնուրոյնութիւն և ինքնագործութիւն զարգացնել, մերթ նպաստում է յամառութեան առնելուն, և ինքնուրոյնութեան ու ինքնայամութեան չվոհելուն. յամառութեան դէմ մղտումն էլ, երբ կարգով, երբեմն անցնում է սահմանից և դառնում է պատերազմ սանիկի ինքնուրոյնութեան դէմ։

Դաստիարակի այնպիսի անել դրութիւններից մէկը, ինչպէս վերը յիշուած է, նրա՝ մանկան կամակորութեան դէմ մաքառելն է լինում։ Ո՞րտեղ է բնաւորութեան տկուճնութեան և յամառութեան մէջն սահմանը։ Ի՞նչպէս նմանալ, թէ յիշեալ դէպքում, մինչ է ցոյց տալիս մանուկը, կամքի զօրեղի հաստատութիւն, թէ հասարակ յամառութիւն։ Ի՞նչպէս պէտք է անել, որ յամառութեան դէմ մաքառելիս՝ չանցնել որոշեալ սահմանից, ինչպէս անել, որ յամառութիւնը արմատահան անելով, չը վնասել բնաւորութեան տկուճնութեանը, և չը վիշացնել մանուկին բարոյապէս։

Դաստիարակական գործնականութեան մէջ չենք գտնում իսկական եզրը, բնոյքի տկուճնութեան և՝ յամառութեան մէջ։ Շատ անգամ, երեխաների մէջ յամառութիւն են անուանում որ և է հրամանի սրտով չը կատարելը, առանց դատելու հրամանի արժանաւորութեան մասին և երեխաների՝ կատարում տալու կարողութեան մասին։ Դրա համար էլ՝ յամառութիւն խօսքը շատ լայն ծաւալ ունի։ Յաճախ մանուկը պարզ կերպով չի հասկանում, թէ ինչո՞ւ են նրան արգելում այս կամ այն գործողութիւնը, և ի հարկէ, չի հնազանդւում, հրամանը խախտում է և յամառի տիտղոս ստանում։ Շատ անգամ երեխային արգելում է այն, ինչ որ առաջ թոյլ էր տրւում, և երբ երեխան այդպիսի հրամանը խզում է, պատժի արժանի յամառութիւն է համարւում երեխայի կողմից։

Օրինակի համար, երեխան խաղալու համար նդրում է մի որ և է թանկագին, բայց վնասուն իր։ Մայրը կամ դաստիարակչուհին մերժում են երեխային, ասելով, որ այդ առարկան խաղալու համար չէ, բայց յետոյ զբաղեցնելով նրա նդրիքին, տալիս են նրան ցանկացած առարկան, խրատելով, որ նա զգոյշ վարւի առարկայի հետ։ Բայց հէնց որ նկատում են, որ նա չի կարողանում զգոյշ խաղալ նրա հետ, յետ են պահանջում համոզելով մի շատ անմեղ միտքով, թէ „բաւական է, հոգիս, որքան խաղացիր“։ Բայց հոգեակը չի հասկանում, թէ ինչո՞ւ պէտք է դադարի այն առարկայով խաղալուց, որ նրան այնքան դուր է գալիս, և որի հետ փոքր ժամանակ առաջ վճռած էր խաղալ, ուստի և նա հրաժարւում է յետ դարձնել։ Այն ժամանակ մայրը անուանում է նրան յամառ, անուշիկալ և անվստահ երեխայ, և առանց այլևայլութեան խլում է նրա ձեռքից առարկան, առնելի տալով նրան, որ ազատ ժամանակ մտածէ իր ծնողների վերին աստիճանի անհետևաբար գործելու մասին։

Երբեմն երեխային արգելում են մինչև անգամ այն գործողութիւնները, որոնք անհրաժեշտ պահանջ են բնութիւնից։ Կան այնպիսի կարգադրութիւններ և զերմանական քացխած դաստիարակչուհիները, որոնք երեխայից պահանջում են, որ նա աղմուկ չը բարձրացնէ, չը ցատկի, չը թռչկոտ-

տի, չը բղաւի, որ նա միշտ շարժւի կարգով և անշեղ, բերանը բաց չընայէ այս ու այն կողմը. շուռ ու մուռ չը գայ, նստէ միշտ հանգիստ և այլն։ Շատ պարզ է, որ երեխան այսպիսի հրամաններըը միշտ լսգում, քանդում է, թէև նրան օրէնքը հարիւր անգամ են կրկնում այդ։ Դրա համար էլ նա մեծ կամակորի անուն է ժառանգում։

Ահա այսպիսի ընդարձակ մտքով է հասկացւում, յամառութիւն խօսքը դաստիարակական գործնականութեան մէջ։ Եւ վնաս էն մանուկին, որի դաստիարակները այսպէս են հասկանում յամառութիւնը, և հաստատ ու եռանդուն կամքի տէր լինելով, սկսում են ջնջել յամառութիւնը իրանց սանիկի մէջ։ Նրանք բարոյապէս վնասացնում, անճոռնիացնում են նրան. նրանք փշրում, կտոր-կտոր են անում նրա սեպհական կամքը, ինքնուրոյնութիւնը և անձնաւորութիւնը. դարձնում են երեխային մի երկչոտ տրուկ. որը առանց ընդդիմադրութեան և անգիտակցաբար կատարում է ուրիշների հրամանն ու թելադրածը։

Նախ քան յամառութեան դէմ միջոցներ ձեռք առնելը, պէտք է որքան կարելի է, խիստութեամբ որոշել, թէ ինչ է յամառութիւնը։ Մեր կարծիքով յամառութիւնը պէտք է այսպէս մեկնել. Նա մի գիտակցական և թախանձագին ձգտումն է կատարել իր անարդար ցանկութիւնները (կապրիզ)։ Այժմ տեսնենք յիշեալ որոշումը։

Գիտակցութեան նշանը պէտք է յամառութեան կարգը դասել, որովհետև, յամառութիւն խօսքը սովորաբար նշանադրում են երբև հոգեկան բնաւորութեան մի վիճակ, որով հասկանում են հոգւոյ տրամադրութիւնը։ Իսկ գիտակցութիւնը բոլոր հոգեկան երևոյթների բնաւորական գիծն է։ Մի գործունէութիւն, որ քիչ թէ շատ գիտակցութեան փայլով չէ լուսաւորուած, հետևողական, մեքենայական է։ Այն անձին չի կարելի յամառ կամ անհաստատ կոչել, որ բացառապէս մեքենայաբար է գործում. ոչ մի մեքենայ յամառ առարկայ չէ։ Եթէ մանուկը առանց գիտակցութեան, թախանձանօք կատարում է այն գործողութիւնները, որ անարդար համարելով, չըպէտք է կատարէը, նա մեքենայ է, բայց միայն զգացող մեքենայ։ Այս պատճառով կենդանիներին էլ, կարելի է միայն այնքան յամառ համարել, ինչպէս օր. էշը, որքան որ կարող ենք ասել, ըստ մեր ըմբռնման, թէ գիտակցութիւն ունի։

Յամառութիւնը մի թախանձական ձգտումն է, առանց թախանձանքի յամառութիւն չըկայ։ Եթէ մենք ենթադրենք, որ յայտ եկած ձգտումը արագութեամբ անհետանում է և տեղի տալիս ուրիշ ձգտման, այն ժամանակ մենք ունենք բոլոր ցանկութիւնները զանազան ինքնատացութիւնները և ոչ թէ յամառութիւն։

Այն բոլոր ցանկութիւնները, որոնք հետևաբար ձգտում են յամառութեան ժամանակ, անպատճառ անարդար պէտք է լինեն, այլապէս յամառութիւնը կանհետանայ։

Բոլորովին արդար ցանկութիւնների Թախանձական և գիտակցական հետևողութիւնը, մի արժանագովելի յատկութիւն, տակաւին բնաւորութիւն ու հաստատ կամք է, և մանկավարժը դրա դէմ զինաւորելու կարիք չունի։ Ճշմարիտ է, Թախանձանքը՝ լինի նա միևնոյն անգամ շատ արդար և երաւացի ցանկութիւնների համար, ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ յամառութիւն, այսինքն հէնց այն ժամանակ, երբ հանգամանքները արգելք են լինում ցանկութիւնների կատարելուն։ Շատ արդարացի կըլինի, եթէ երեխան պահանջէ նոր հագուստ, զանազան զուարճութիւններ և նորնոր կերակուրներ, բայց անյապաղ նոյն րոպէին պահանջելով, նա երաւասութիւն և յամառութիւն է անում։ Այսպէսի դէպքանների վերաբերմամբ պէտք է ասել, այն պահանջը, որ յարգելի պատճառներով խոյտն չի կարելի բաւականացնել, հէնց այն րոպէին անարդար պահանջ է և սրա համար Թախանձելը յամառութիւն է։ Բայց մեւս կողմից յարգելի հանգամանքներին դիմելը ինքն ըստ ինքեան արդարացի պահանջը ձգելու համար, շատ անգամ կեղծ է լինում, ինչպէս դաստիարակութեան մէջ, նոյնպէս և հասարակական կեանքում, շատ անգամ անշնորհքութեամբ է սքօղում ինքնասիրական ցանկութիւնը չըկատարելու արդարացի պատճառը։

Յամառութեան վերաբերմամբ յառաջ բերած գծերն աչքի առաջ ունենալով, մենք այժմ վերլուծենք յամառութեան զանազան մասնաւոր դէպքանները։

Երբ մանուկը Թախանձանօք խզում է անհասկանալի հրամանը, կարելի է արդէօք այսպիսի դէպքանքներում երեխային յամառ անուանել։ Եթէ խոստ քննենք, այսպիսի դէպքանքներում յամառութիւն չըկայ, որովհետև երեխայի գործողութիւնների մէջ յամառութեան էական գիծ—այսինքն գիտակցականութիւն չըկայ։ Մանուկը չի հասկանում, Թէ ինչու այս ինչ գործողութիւնը պէտք է անպատճառ կատարել կամ չըկատարել. գործողութիւնը կամ գրաւում է նրան դէպի ինքը, կամ մղում է երանից, —իսկ բնահաւատական բնաւորութեան շարժառիթներով. նրա բանականութիւնը և գիտակցութիւնը այստեղ օգնութեան չեն հասնում նրան, նրա գործելը կամ անգործութիւնը մի մեքենայապէս հետևողական երևոյթ է։ Հէնց որ երեխայք սովորում են լսելել երանց ձեռքերին, այն ժամանակ ամեն բան, ինչ որ ձեռներն է ընկնում, խոյտն բերանն են տանում, և այն բանը երկար ժամանակ սեւեռում է։ Ինչքան կամենաք, դուք արգելե-

ցէք երեխային այս գործողութիւնն անել, էլի նա կանի. այդքանը բաւական չէ, նա ամենայն ինչ որ բերանը դրեց, կուտէ։ Կարելի՞ է արդեօք երեխայի, այդ չափազանց թախանձանօք կրծոտ շարժողութիւնը յամառութիւն համարել։ Եթէ այդպէս է, ուրեմն բոլոր երեխաները յամառ են, որովհետև այս երևոյթը նրանց երեխայի կեանքում նկատուում է։ Մանուկը չի հասկանում այս գործողութիւնը արգիլելու նպատակը, երբ ձաշակը տալիս է նրան շատ ախորժելի զգացմունքներ, երբ նա ծառայում է նրան իբրև զարձութեան ամենագլխաւոր և առաջնակարգ աղբիւրներից մէկը։ Ցետոյ, երբ արդէն հասի հետ կրտեղան և ուրիշ արտաքին զգացմունքները, երբ մանուկը կարող է ճաշակի սէս ուրիշ ճանապարհներով զարձութիւն ձեռք բերել, երբ նա շատ անգամ վնասաբերութիւնով չի շղում է անախորժ զգացմունքները, որոնք բոլորը զգացել է ճաշակման ճանապարհով, անքննին և անգիտակ հետաքրքրութիւնից, այն ժամանակ կամաց-կամաց նա կրհասատանի այն ցուցմունքի նպատակը— Թէ չըպէտք է ամեն ձեռք ընկած բան բերանը դնել և քիչ-քիչ կրհեռանայ այդ սովորական գործողութիւնից։

Նոյնպէս երեխայի կողմից յամառութիւն չէ այն դիպուածներում, երբ մանկան արգելում են անել այն գործողութիւնը, որ միանգամ կատարել է։ Այն ժամանակ երեխայի միտքը խճճուում է.—Թէ ինչո՞ւ, և կարելի է և չի կարելի։

Եթէ բոլորովին կարելի չըլինէը, այն ժամանակ չէինք Թոյլ տալ մանկան անել որոշեալ քայլը, ոչ առաջին անգամ և ոչ երկրորդ անգամ. նպատակ եթէ սկզբում կատարել է այդ, ապա ուրեմն, ինչո՞ւ վերջում նրանից, գործողութիւնը կատարելու հինգերորդ կամ տասերորդ անգամը։ Ծնողների կարգադրութիւնները այն ժամանակ կորցնում են իրանց նպատակը երեխայի աչքում, և սրա հետ էլ երեխան կորցնում է գիտակցութիւնը. Թէ ինչ է անում և ինչ չէ անում։ Գիտակցաբար գործող էակից նա դառնում է մեքենայ, որ անգիտակցօրէն կատարում է միայն ծնողական հրամանները։

Ցիշեալ երկու դիպուածներում կարելի է ակնարկել յամառութեան մասին, բայց ոչ բառի բուն նշանակութեամբ.—այսինքն այնքան, որքան այս դիպուածներում երեխայի գիտակցականութիւնը գործում է։ Իսկ գիտակցականութիւնը, միայն մի քանի աստիճան է գործում։ Երեխաները չեն հասկանում հրամանի նպատակը, նրա նպատակ, բայց նրանք գիտեն և լաւ հասկանում են, որ այս ինչ հրամանը տւած է, որ յայտնի գործողութիւնը ծնողներին հաճելի չէ, և Թէ իրանք, աչքի առաջ ունենա-

ւով ծնողները կարգադրութիւնը, չըպիտի կատարեն այդ դործողութիւնները, թէպէտ և արգելքի պատճառը չեն հասկանում։

Ծնողները մշտական հոգացողութիւնն այնքան պիտի լինի, որ մանուկը կարողանայ մտածել, թէ նրանք այնչափ խնամքներ տանելով իր վրայ, չկշռած դիպուածում, անելիքը արգելելով անգամ, նրա բարին են ցանկացել։ Այս տեսակէտից նայելով, ծնողի ուած անհատականալի հրամանի թափանձագին խախտումը, երեխայի կողմից յամառութիւն է համարւում։ Բայց յամենայն դէպս գիտակցականութեան այն մասը, որ մանուկին յարակից է կշռեալ դիպուածներում, վատը է, ծանծաղ է և այդ պատճառով էլ հրամանի թափանձագին խզելը կարելի է դատել, իբրև յամառութեան ամենաթեթև և անկատար տեսակը, որ, ի հարկէ, ընդունակ է և հեշտութեամբ կարող է ուղղել բարձր և բարդ յամառութիւն դառնալ։

Տեսնենք յամառութեան երկրորդ յատկանիշը—այն թափանձանքը, որ անարգաը ցանկութիւնները կատարելու համար է, այստեղ մենք կարող ենք յառաջ բերել մի ապացոյց, որ պէտք է միշտ աչքի առաջ ունենանք յամառութեան դէմ գործելու ժամանակ, այն է յամառութեան ժամանակաւոր ծագումը երեխաների մէջ։ Ժամանակաւոր յամառութիւնը ծնում է գործարանական բնաւորութեան պատճառներից, նեարդային գրգռմունքից և երեխայի ցաւագար և դիւրագրգիռ լինելուց։ Նոր սկսուղ հիւանդութիւնը և երեխայի խանգարուած առողջութիւնը, անկանոնութիւնները են յառաջացնում, ոչ միայն ֆիզիքական կեանքում, այլ և հոգեկանում։ Երեխան դառնում է լրատածի, անու չակալ և իր ցանկութիւններուի վրայ սաստիկ անկարող։ Այսպիսի յամառութեան դէմ մղուելը պէտք է տեղի ունենայ ամենից առաջ երեխայի առողջութիւնը վերականգնելու համար հոգս քաշել։ Շատ անգամ նկատել է, որ, երբ երեխայի առողջութիւնը վերականգնւում է, նեարդային զգացողութիւնը և դիւրագրգռութիւնը մեղմանում են, մի և նոյն ժամանակ կամաց կամաց անհետանում են լրատածութիւնները և յամառութիւնը։ Նշանակում է, երևան եկած յամառութեան դէմ կարիք չըկայ, ուրիշ ոչ մի միջոցի ձեռք տալու, այլ միայն պէտք է ուշադրութիւնով հոգ տանել երեխայի առողջութեան մասին։

Բայց ժամանակաւոր յամառութիւնը, որ հիւանդութեան ազդեցութիւնով է ծագել, կարող է պատահել, որ այնպէս հեշտ և չնչին չըվերջանայ—այսինքն կարող է պատահել, որ հիւանդութեան կրճատելով լինքը էլ չըկրճատւի, այլ աւելի ահեղով մշտական երևոյթ դառնայ։ Երեխայի հիւանդութեան ժամանակ, բնականաբար նրա վրայ հոգատարու-

*Թիւնը և խնամքը կրկնապատկուում է,—բոլոր շրջապատող անձինք աղ-
խատում են, որքան կարելի է նրան չբարկացնել, կատարել նրա բոլոր
ցանկութիւնները, համբերութիւնով տանել նրա խրատ ու թիւնը և յա-
մառութիւնը։ Հիւանդութեան ժամանակ երեխան օգտուում է առանձին
իրաւունքներով և առանձնաշնորհութիւններով. նա ընտելանում է նրանց
և առողջանալուց յետոյ էլ ցանկանում է, որ երկար ժամանակ վայելէ
այն արտօնութիւնները։ Այսպիսի մի ցանկութիւն, ի հարկէ, ապօրինի է
և խելօք ծնողները չըպիտի բաւարարութիւն տան դրան։ Երեխային պէտք
է անցկացնել այդ անհեթեթ դրութիւնից դէպի սովորական, առողջ դր-
ութիւնը, պէտք է հանել խնամողական դրութիւնից, որի մէջ, նա հի-
ւանդ ժամանակ գտնուում էր։ Բայց հէնց այս փոխադրելն է, որ չեն կա-
րողանում անել ծնողները, նրանք չեն զգում երեխային այն արտօնու-
թիւնից, խնայում են, որ քիչ առաջ հիւանդ էր, և մասամբ էլ չըկարո-
ղացան ընդդիմադրել նրա մի քանի աստիճան բարդւած սովորութիւն-
ներին։ Եւ ահա, մանուկը առողջանալուց յետոյ, այնպիսի արատներ
տէր է դառնում, որ մինչև հիւանդանալը բոլորովին չէ ունեցել, որոնց
դէմ մաքառում է դաստիարակը խելացի կամքով, որոնց վրայ, չընայե-
լով նրանց ապօրինութեան և արդարութեան, մանուկը պնդում է—այ-
սինքն յամառութիւն է անում։*

*Յամառութեան այսպիսի հեշտ փոխոխութիւնը, ինչպէս ժամանակա-
ւորինը մշտականն, խոյս տալու համար հոգեկան դրութիւնից, երբե՛ք ֆի-
զիքական հետևանքները, կարևաւոր է ոչ միայն իր ժամանակին փոխա-
դրել մանուկին արտասովոր, հիւանդոտ դրութիւնից, դէպի սովորակա-
նը, առողջը, այլ և կարևաւոր է ուշ ուշով հետևել երեխային նաև հի-
ւանդ ժամանակ։ Շատ էլ խելացի չէ, հիւանդ երեխայի բոլոր քմահաճու-
թիւնները կատարել։ Պէտք է աշխատել խստիւ զսպազանել երեխայի
այն ցանկութիւնները, որոնք իսկապէս հիւանդութեան արդիւնք, և պարզ
երևոյթներ են, որոնք ծագում են երեխայի մէջ, գործարանական առանձնապէս զգացուած նեարդային դրութիւնից, մի խօսքով պէտք է
հոգս տանել, որ երեխայի վարքը, հիւանդութեան ժամանակ նշանաւոր
կերպով չըխոնարհի սովորականից, իսկապէս ասած, անհրաժեշտից շատ
չըխոնարհի։ Հակառակ դէպքում դժուարին կըլինի սովորական դրութիւ-
նը վերականգնել. երեխայի մէջ երևան կըգան մի քանի տհաճական սո-
վորութիւնները և հարկաւորութիւնները։*

*Բայց յամառութեան մեծագնահատ դիպուածները ընկնում են յամա-
ռութեան երրորդ տեսակի, այն է անարդար ցանկութիւնների տեսակի
վրայ։ Ի՞նչն է արդար, ինչն անարդար։ Այս հարցի վերաբերմամբ շատ*

անգամ հասասկաւորը և երեխաները տարբերուում են, նրանցից իւրաքանչիւրը իւր սեպհուկ պարտքն է համարում պնդել այն, ինչ որ արդարացի է՝ իր համոզմունքով. այստեղից յառաջ են գալիս ընդհարումները, որոնց աղբիւրը, մեծերի կարծիքով, երեխաների յամառութիւնն է։ Բայց հասասկաւորների և երեխաների ընդհարման այսպիսի բացատրութիւնը տալը, խիստ պարզ և թեթև լինելով, շատ անգամ հեռու է ճշմարտութիւնից։ Երեխաները ամեն դիպուածում մեղաւոր չեն, նրանք մեծերի հետ վէճեր ժամանակ միշտ էլ յամառութիւն չեն անում. երբեմն մեղաւորութիւնը մեծերի կողմն է լինում, և այսպիսի դիպուածներում նրանց կռիւը երեխաների յամառութեան դէմ, մի և նոյն է, ինչ որ Դօն-Քիշոտի կռիւը քամու ջրաղացների դէմ, կռիւ՝ չեղած թշնամու դէմ. բայց և այնպէս, այս կռիւը շատ տխուր վախճան է ունենում երեխաների համար։ Դիպուածները յառաջ բերելնք մտածածին կուռ, յամառութեան դէմ. երբ երեխան արդար գործ է պաշտպանում, իսկ մանկավարժը անարդար, նշանակում է մրցելու միջոցին մանուկի ինքնուրոյնութիւնը և անձնաւորութիւնը նահատակուում են։

Հարկ չկայ խօսելու այն բանի մասին, որ երեխաները երբէք արդարացի չեն համարում մեծերի այն պահանջները,—թէ աղմուկ չբարձրացնել, չբղաւել, չվազվզել, չըցատկել և այլն։ Այս դործողութիւնները բնութիւնն է պահանջում երեխայից, և նա բոլորովին արդարացի է համարում բնական պահանջը։ Ուստի նա յամառաբար կրկրկնէ այդպիսի գործողութիւնները, առանց ուշադրութիւն դարձնելու դաստիարակի բոլոր արգելքներին։ Ի հարկէ, մեծերն իրաւունք ունին պահանջելու խաղաղութիւն և հանգիստ. ինչպէս և երեխաները խաղալ, վազվզել, աղաղակել, և այլն։ Բայց մեծերը չըպիտի երեխաների իրաւունքները ոտնակոխ անելով, իրանցն իրագործեն—անպատճառ մեծերին դուր չէր գալ, եթէ որ մի՝ իրանցից աւելի գօրեղ անձնաւորութիւն, նրանց իրաւունքները ոտնակոխ անէր և իրանն իրագործէր։

Գործին այնպիսի ուղղութիւն պէտք է տալ, որ երկու կողմն էլ բաւականութիւն ստանան, որ երեխաները կարողանան խաղալ, աղմուկ բարձրացնել, իսկ մեծերը զւարճութիւն գտնեն հանգստութեան մէջ։

Մեծերի պահանջները վոքրերից, առանձնապէս եթէ վերցնենք, կարող են չըհակառակվել մանկական բնութեան, կարող են մինչև անգամ մի քանի խելօք հնարանքներ ունենալ, բայց և այնպէս երեխաների մէջ յամառ խզումն զարթեցնել։ Այս այն ժամանակ է լինում, երբոր երեխաներին ուղղած պահանջները շատ են, երբ որ նրա ամեն մի քայլը որոշ ուղղութեան մէջ են դնում և բոլորովին ազատութիւն չեն տալիս նրան։

Աղատութեան կարեւորութիւնը մարդուս էական պահանջ է, որ և ամեն կողմից ճնշելով խոչընդոտներով, միակ ելքը դրանց յամառաբար և կանոնով՝ խզելու մէջ է գտնում։

Այժմ, ուշս դիպւածում, ոմ է արդար, ոմ է մեղաւոր։ Հազիւ թէ երեխաները լինեն մեղաւոր յամառութեան մէջ, սրանք անել վէճակի մէջ են դրւած—կամ հրաժարւելը բնական պահանջներից, կամ յամառաբար ոտնակոխ արւած կարգադրութիւնները, առանց մեծ դնելու, պահանջողութեան և յամառութեան մէջ մեղադրելուն հայելն։

Եթէ դաստիարակը գործ ունի ոչ թէ մի, այլ շատ անձնաւորութիւնների հետ, նրան անհրաժեշտ է լսմանալ, թէ իր ձեռքն առած դաստիարակական միջոցները համապատասխան են, թէ անհամապատասխան, երեխաների անհատականութիւններին։ Երեխաներին ուսումնարանում զննելով, կըտեսնենք որ նրանք խզում են դաստիարակի պահանջները, իրանց տեսակէտից, ւրւրաքանչիւրը իր սեպհական քմքի համեմատ. մի աշակերտի առանձնապէս ծանր և անախորժ է թուում այս պահանջը, իսկ միւսին—մի ուրիշը, համաձայն նրանց անձնական ճաշակի և ուսումնարանական դաստիարակական ազդեցութիւններին։ Դաստիարակը նկատելով, որ այս ինչ երեխան միշտ խզում է որոշ կանոնը, նրա այդ խզումը կարող է յամառութիւն, չարամտութիւն համարել, և այդ աշակերտի հետ ւսելի խիստ մրցմանի մէջ մտնել։ Բայց ինչո՞վ է մեղաւոր սանը, որ իր կազմւած-քի ժառանգական առանձնայատկութիւնների չնորհիւ, չէ կարողանում ապրել, յարմարւել այդ պահանջի հետ, չընայելով իր սրտաբուղխ ցանկութեան։ Մի սարսափելի երկմտութիւն նրան տարբերում է.—կամ չըպիտի լինէս այն, ինչ որ կաս, ինչ որ ստեղծել է քեզ բնութիւնը և ինչ որ դարձրել է սկզբնական դաստիարակութիւնը, կամ պէտք է լինես յամառ։ Կամայ-ակամայ սանը երկրորդ ելքն է ընտրում, համբերութեամբ տանելով այն բոլոր անախորժ հետեւանքները, որոնք լծորդւած են նրա հետ։ Դաստիարակները պէտք է ուշադրութիւն դարձնեն մանկան յամառութեան այն տեսակի վրայ, որը մի առանձին եռանդով և ուժով է արտայայտւում. մենք աչքի առաջ ունենք այն դիպւածները, երբ դաստիարակները և սանները երկու պայքար մտնող կողմերի են բաժանւում և կանոնաւոր պատերազմ մղում։ Աշակերտները հեռանալով իրանց հայեացքից, առանց խոթելու արդարն ու անարդարը, շատ անգամ բարոյական պարտականութիւն և պատւի վերաբանդնումն են համարում, կատարել յայտնի գործողութիւնը, օրինակ քամբախտութեան մէջ ընկած ընկերին չըմատնել, չըհաշտւել անարգողի հետ, ներողութիւն չըխնդրել գործած յանցանքի համար և այլն։ Դաստիարակները էլ՝ դաստիարակական գործից

պարտաւորած, հակառակն են պահանջում սանելից, և եթէ նրանք (սանելը) եռանդով պնդում են նրանց ասածի վրայ, վերջին աստիճանի յամառութիւն է համարւում։ Ակսւում է կռիւը, որ արագութիւնով կիրք է դառնում. թէ այս և թէ այն կողմից գործի մէջ խառնւում է եսականութիւն, անձնական կիրք, ցանկութիւն իր ասածն անելու, ինչ կուզէ լինի։ Մրցող կողմերը մէկ մէկու չեն լսում, ամեն մէկից գործ են դրնում միմեանց դէմ, մի խօսքով, կատարեալ պատերազմ է բացւում նրանց մէջ։

Այս չիշած երևոյթը ամենատխուրն է դաստիարակութեան, ուսումնարանական կեանքի մէջ։ Ինչով ուզում է վերջանայ կռիւը, որ կողմն էլ որ յաղթէ, միևնոյն է, գործի վերջը վատ է, դաստիարակական նպատակները էութեան վնասում է։ Ուրեմն ինչումն է այստեղ կռւի էութիւնը։

Այսպիսի դէպքերում երեխաները պաշտպանում են նրանց ամենաթանկագին և ամենասուրբ համոզմունքները, նրանց գաւառաճանելը ամենամեծ նշանակութիւն են համարում, նրանք պատրաստ են ամբողջ կրծքով նահատակել, նրանց կարծիքով բոլորովին արդար գործի համար։ Թող նրանց համոզմունքը կեղծ լինի, Թող նրանք գործի մէջ բոլորովին անարդար լինեն, բայց քանի որ նրանք չեն լմացել նրանց գործի անարդարութիւնը, քանի որ նրանց հնմնուվին չէ պարզած ստութիւնը, նրանց դիրքի կեղծութիւնը, նրանք անխախտ կըկանգնեն. նրանց կարծիքով սուրբ և Հչմարիտ գործի համար, անարդարութեան, խաստութեան բռնութեան դէմ։ Նրանք նահատակները և հերոսները են։ Թող այսպիսի դէպքերում դաստիարակները յաղթող հանդիսանան. բայց նրանց յաղթութիւնը մարդկային բնութեան պատուարժան յատկութիւններին վերաբերանք կըլինի--նրանք ստիպել են երեխաներին հրաժարւել ազնիւ պնդումից, համոզմունքը գաւաճանել, սպիտակին, սև ասել. բարոյական ոյժը ստիպմամբ հպատակեցրել են ֆիզիքական ուժին։ Բաւական է միայն մի քանի այդպիսի յաղթութիւններ անել դաստիարակական գործն արմատից կոչնչանայ, մանկական բնաւորութիւնը կըստորանայ, մանուկը կըվերածուի, ընդունակութիւնը կը կորցնի, որոշելու բարձրը ցածրից, բարին չարից, և ա նրա ստորից։

Անենք թէ երեխաները մինչև վերջը կռիւ մղեցին և յաղթեցին։ Բայց յաղթող դաստիարակութեան համար, այս յաղթութեան օգուտն էլ քիչ է։ Շատ կարելի է, նրանք իրանց տոկունութիւնով յաղթանակ ձեռք բերեն, իրանց կեղծ հայեացքն համար, որը մի անգամ վորձելով ամրապնդում է, որ և դաստիարակութեան համար չի կարելի առանձնապէս օգտակար համարել։ Ցետոյ, եթէ որ յաղթութիւնը կռւից յետոյ է

տարած, դաստիարակիչները դէմ ամէն տեսակ թշնամական գործողութիւններ կատարելով։ Այժմ, ինչ դրութեան մէջ կ՚ըլլին վերջիններս։ Անտարակոյս յաղթած կողմը մնշտ նահատակուած է, մնշտ յաղթողներին ընդհանուած է։ Դաստիարակիները սաներուն համար կրմնան մարտչող և այն էլ յաղթուած կողմ։ Սրբ որ գործը այս դրութեան մէջն է, կանոնաւոր դաստիարակութեան մասին այլ ևս խօսք չի կարելի ասել։

Պէտք է ամէն մնջոց գործ դնել, վախչել այսպիսի ընդհարումներից։ Հէնց որ անհամաձայնութիւն ծագեցաւ դաստիարակիչների և սաներուն հայեացքների մէջ, արդարութեան կամ անարդարութեան մասին, դաստիարակիչ պարտականութիւնն է երևան հանել սաներուն հասկացողութեան անճշտութիւնը, համոզել նրանց իրանց հասկացողութեան համեմատ և ոչ թէ ստիպել նրանց այն գործողութիւնն անելու, որ համոզմունքին հակառակ է։ Եթէ դաստիարակիչն կ՚ուզէ համոզել մանուկներին, ապա նա իր նպատակին կատարելապէս կ՚հասնի, իսկ եթէ նրան չի յաջողուի վոխոխել երեխաների համոզմունքը. նա չ՚պէտք է մրցման մէջ մտնի նրանց հետ, որովհետև այս մրցումը երբէք բարի բան չի ծնել, թէ յաղթէ մանկավարժը, թէ չ՚ուզաղթէ։

Մանուկներին հանգստութեան մէջ թողնելով, նա պէտք է նրանց քանչիւր դիպուածից օգուտ քաղի, որպէս զի կարողանայ ցոյց տալ նրանց հայեացքի սխալը և համոզմունքի վոխոխութիւն գործեցնէ նրանց մէջ։ Արդարութեան և անարդարութեան այսպիսի ընդհարումների ժամանակ, բացի խղճի և բանականութեան վրայ ազդելը, ուրիշ ոչ մի ճանապարհ չ՚կայ և չի էլ կարող լինել։ Ցամառութեան զանազան տեսակների հետազօտութիւնը ցոյց է տալիս, թէ ինչպէս զգուշութիւնով պէտք է մրցել նրա դէմ, որպէս զի աւելի մեծ չարիք չ՚ըսառաջանայ, քան ինքը յամառութիւնն է, որպէս զի յամառութեան հետ ուրիշ երևոյթներ չ՚ըխառնուին։

Եթէ երեխայի յամառութեան ճիշտ, իսկական երևոյթը շուտով է նկատուում, այնպէս նրա դէմ զգոյշ, խելացի և կանոնաւոր մրցում անել, այնպէս երևոյթի հէնց արմատների վրայ ուղղել, և ոչ թէ հետևանքների։ Մանաւոր, առանձին մնջոցները, որքան և խիստ, եռանդագին չ՚լինին, կանոնաւորութիւնը ամրոզջութիւնով չ՚ըպահպանելու ժամանակ, երբ որ աչքի առաջ կայ, միայն յամառութեան հետևանքները և ոչ թէ պատճառները, շատ քիչ օգուտ ունին և համարեա թէ չունին։

Բայց երբեմն դաստիարակական գործնականութեան մէջ մենք պատահում ենք մի շարք յարաբերութիւնների երեխայի հետ, որ կարծես թէ, յամառասէս երեխայի մէջ յամառութիւնը զարգացնելու համար է տեղմանած և նրանցից երբև բացառութիւն, երեխայի յամառութեան դէմ մրցելու մեկ-մեկ վորձեր, որոնք հանդում են հերքելէսեան սիւներին։ Երևի, չա-

տերը տեսած կըլլնին այս տեսակ երևոյթ. մի ընտանիք, որի անդամներեն են Թուլական, չարաճճի է և յամառ. Նրանց ամբողջ տան պաշտելի տղան կամ աղջիկը։ Երեխայի բոլոր ըրածացուքթիւնները անարգել կատարում են ծնողները, չը կամենալով երանց մին ու ճար որդուն տրտմութեան անախորժութեան ամենաթոյնը տուեր անգամ պատճառել. բաւական է միայն, որ՝ մօր կամ հօր մօտ գնայ, դունչը ծռէ, մի քիչ փնթփնթայ, կամ լաց լինի, եւ որ ծայրահեղն է ձևականապէս գոռայ, իսկոյն և եթ նրա ուզածը կատարին։ Այսպէս երեխան՝ ամբողջ տանը հրամայում է. տան մէջ բոլորը, սկսած պատուաբժան և. վեհապանծ հայրիկից մինչև խոհարարը նրա դուդուկով են պարում։ Վերջապէս երեխան իրասացուքթիւնով և յամառութիւնով, բոլորին համբերութիւնից հանում է։ Այն ժամանակ ծնողները մի լաւ միտք են յղանում. թէ երեխան բոլորովին ձեռքից գնացել է, շատ ինքնակամ դառել, և թէ այս անկարգութեանը պէտք է վերջ տալ։ Եւ ահա ծնողները յանկարծ խստանում և հաստատակամ են դառնում։ Օգուտ քաղելով երեխայի յամառութեան ձկեւելու առաջին դիպուածից, նրանք, սովորութիւնը նախատելով, չեն զիջանում նրան և մինչև անգամ յամառութեան համար պատժում են։ Հասկանալի է, որ երեխան սարսափելի աղաղակ է բարձրացնում, որ վայր ընկնելով յատակի վրայ թաւալ գլոր է գալիս։ Այսպիսի ցաւալի դրութեան մէջ տեսնելով երեխային, ծնողների սիրտը փափկում է, բարկութիւնը ողորմածութիւն է դառնում։ Երեխային մխիթարում, փաղաքշում են և աշխատում են մոռացնել անախորժ տպաւորութիւնը. երեխան իր ուզածին հասնելով, քիչ-քիչ հանգստանում է, թէ և ոչ շատ, որպէս զի իր լացով պատժէ ծնողներին, անուշակալութեան համար։ Բայց ծնողները երբեմն էլ երանց զսպում են, ուշադրութիւն չեն դարձնում երեխայի լացի և աղաղակի վրայ, չեն կատարում նրա յամառ պահանջները։ Բայց մի անգամ սովորած համարելով և ընդհանրապէս մեղքանելով նրան, ուրիշ ժամանակ այսպիսի դիպուածներում, առաջուայ պէս են վարուում, կատարում են նրա բոլոր ցանկութիւնները, և միայն այն ժամանակ, երբ կրկին երաստ ութիւն է առնում, նրանք պատիժով են սպառնում նրան։

Հարցրէք այդ ծնողներին. թէ ինչո՞ւ այնպէս յամառ է նրանց որդին որ չի կարելի նրա հետ ոչ մի կերպ եօլա գնալ. նրանք ձեզ սառնասրտութեամբ կրպատասխանեն. «Ի՞նչ անեա։ Ամեն մէջոց գործ ենք դրել, մինչև անգամ փորձել ենք պատժել. ոչինչ չի օգնում։ Երևի այդպէս է ստեղծել դրան Աստուած։ Եւ ո՞ւմ կողմն է ընկել, չենք իմանում։» Նրանք համոզուած են, որ չերաւի երեխային ոչինչ չի կարելի անել, որ իսկապէս նրանք գործադրել են բոլոր կարելի եղած միջոցները։ Ահենեւ է, որ յամառութեան

դէմ այսպիսի առանձին միջոցները, առաջւայ անկանոն դաստիարակութեան արգասիք է, մի բոլորովին անօգուտ նահատակութիւն է ծնողների և երեխայի համար։ Այդ ազդեցութեան տակ երեխան բոլորովին չէ ուղղուում, նրա յամառութիւնը մեղմանում, այլ միայն անհանգստութիւն և հոգսեր են ծնողների և առաւելապէս երեխաների համար։ Կամ պէտք է մի կարգ ու կանոնի հետևիլ, կամ չըհետևիլ. շատ վատ է, մի կողմից միւսը տատանուիլը։ Եթէ մի անգամ նկատած է երեխայի յամառութիւնը, պէտք է աչքի առաջ ունենալ երկու բան. գտնել յամառութեան պատճառը և գործել նրա դէմ կանոնաւոր կերպով։ Առանց կատարելու այս երկու պայմանները, կարիք էլ չը կայ յամառութեան դէմ մրցել։

Թարգ. ԴԱՍԾԻԱՐԱԿ

Խմբ.-Հր. Տ. Նազարեան.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ի 1891Թ. ՀԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՆԸ

ՏԱՐԱԶ

Ազիւրի յատկ.

ԱԶԲԻԲ

Գեղարուեստ.—գրական-երգիծաթ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Միամսեայ հրատարակութիւն երեխաների եւ դաստիարակների համար:

Հայ անդաստանում ցանել գեղեցկի եւ բարոյ սերմեր ու արմնատախիլ անել տգեղ եւ չար որոմ, ահա Տարազի նպատակը:

ԳԵՂԱՐՒԵՍՏ՝ Լինի նա արտայայտուած քանաստեղծի վառ հրեղէնքով, հրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրտ արտիացնող վիպագրի գրչով Տարազում առաջին տեղը պիտի բռնէ: Քննադատութիւն մեր առօրեայ կեանքի՝ լինի նա արտայայտուած վէպով, պատմածով, Փէլիետոնով, թէ կատակով Տարազի գրական մասը պիտի կազմէ:

Տարազի մի երրորդական մասը կը կազմեն պատկերներ, նկարներ, տեսարաններ, թէ արդի եւ թէ անցած գնացած, գլխաւորապէս մեր կեանքից:

ՏԱՐԱԶԻ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարուեստ եւ գիտութիւն. Պատմական եւ ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրուածներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն եւ կենսագրութիւն: Կար, ձեւ, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային արդիւնաբերութիւն եւ տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկածք: Երաժշտութիւն եւ թատրոն: Ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդուածներ եւ այլն: Փէլիետոն ծաղր, առած, կատակ: Եախտախի եւ այլ խաղեր, ռեբուս, հարցեր, խորհրդաւոր ներ: Այլեւայլք, պատասխաններ, յայտարարութիւններ:

ՏԱՐԱԶ պատկերազարդ հրատարակութեան տարեկան բաժանորդագինը 6 րուբլի է, արտասահմանի համար 7 ր. (20 ֆր.) առանձին №№ 25 կ.

Հասցէն՝ Тифлисъ, ред. иллюст. еженед. журн. „Таразъ“ կամ Tiflis (Caucase) Rédaction du journal „Taraz“.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Միամսեայ հրատարակութիւն երեխաների եւ դաստիարակների համար:

Ազիւրի առաջին պրեմիան է մի գեղեցիկ օգնական ԱՆԱՆԱՍ ՈՐԴԻՆ խոզ արուածանելու:

Ազիւրի Բ. պրեմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ պ. Գէորգ Բաշինջաղեանի ԱՂԱՋԱՆԻ ՀՈՎԻՏՐ մեծադիր եւ շքեղ ձիթանկարը վիճակ կը գցի բաժանորդների մէջ սեպտեմբերի մէկ հոկտեմբեր ամսին.

Ազիւրի Գ. պրեմիան գալ 1892 Թ. համար դնկտեմբերի №-ի հետ կոմպարդի մի պատի-տախտակ եւ մի գոգալի փոքրադիր օրացոյց: Բացի դրանցից, տարուայ ընթացքում՝ կատարեալ հաւեղակներ, ոչխարներ ոչոնցից ստացիչ վճռողները կը ստանան միւնամանակներ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, վաւերագրեալներ, զրոյցներ, առակներ, ներքինիներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ.

II) Բանաստեղծութիւններ.

III) Դիտողութիւն եւ արձակ.

VI) Հետաքրքիր տեղեկութիւններ

V) Այլ եւ այլ.

ՉԻԱՐՁԱԼԻՔ

VI) Մանկական, փրկելական, շախմատի եւ այլ խաղեր, յիշատակներ, Թուրքանական խնդիրներ: Անեկդոտներ, հաւեղակներ՝ շուտասեղակներ.

VII) Երգեր ձօտանեղով.

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութիւն եւ դաստիարակութիւնն վերաբերեալ յօդուածներ ու տեղեկութիւններ.

IX) Առաջարկութիւններ, յօդուածդիներ

X) Մատենախօսութիւն եւ նոր գրքեր.

XI) Խոսոն ղոդներ.

Պատասխաններ. Յայտարարութիւններ.

Ազիւրի տարեկան բաժանորդագինը 3 ր. 28 կ. իսկ արտասահմանի համար ալէ միաներով 4 ր.

Հասցէն՝ Тифлисъ, ред. Азбюръ կամ Tiflis (Caucase) Rédaction du journal „AGBUR“.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ